

ԱՍ ՓԱՐԹՆԵՐՁ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՍՓԱՀ
2011, Մայիս

Նախատեսվող «Խուստուի» Եւ գործող «Չանգեզուր» արգելավայրերի տուրիզմի պոտենցիալի գնահատում



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ



ԱՄ Փարթներձ
Քոնսալթինգ Ըամկինի

Բովանդակություն

1 ՆԱԽԱԲԱՆ	4
1.1 ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	5
1.2.1 ԽՆԴԻՐՆԵՐ Եւ Առաջադրանքներ	5
1.2.2 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
1.2.2.1 ՏԵՂԵԿՈՎԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ	5
1.2.2.2 ՏԵՂԵԿԱՄՈՎՈՎԹՅԱՆ ԴԱՍԱԼԱՐԳՈՒՄ Եւ ՎԵՐԼՈՒԾՈՎԹՅՈՒՆ	6
2 ԳՈՐԾՈՂ «ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԽՈՒՍՈՒՓ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ	7
2.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ	7
2.1.1 Ներածություն	7
2.1.2 Էկոտուրիզմի սոցիալ-տնտեսական եւ մշակութային ազդեցությունը	9
2.2 ԳԵՂԱՆՈՒԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ	10
2.2.1 Ընդհանուր ակնարկ	10
2.2.2 Ռեսուրսները	11
2.2.3 Տեղական կառավարման մարմինները	12
2.2.4 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ	12
2.2.4.1 Սևնդի սպասարկում	12
2.2.4.2 Գիշերակաց	12
2.2.4.3 Միջոցառումներ եւ փառատոններ	12
2.2.5 Ենթակառուցվածքներ	12
2.2.5.1 ճանապարհներ եւ տրանսպորտ	12
2.2.5.2 ճանապարհային նշաններ	13
2.2.5.3 Նեռահաղորդակցություն	13
2.2.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	13
2.2.5.5 Տեսարժան վայրեր	13
2.3 ՃԱԿԱՏԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ	13
2.3.1 Ընդհանուր ակնարկ	13
2.3.2 Ռեսուրսները	14
2.3.3 Տեղական կառավարման մարմիններ	15
2.3.4 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ	15
2.3.4.1 Սևնդի սպասարկում	15
2.3.4.2 Գիշերակաց	15
2.3.4.3 Միջոցառումներ եւ փառատոններ	15
2.3.5 Ենթակառուցվածքներ	15
2.3.5.1 ճանապարհներ եւ տրանսպորտ	15
2.3.5.2 ճանապարհային նշաններ	15
2.3.5.3 Նեռահաղորդակցություն	16
2.3.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	16
2.3.5.5 Տեսարժան վայրեր	16
2.4 ԾԻԿԱՐՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ	16

2.4.1 Ընդհանուր ակնարկ	16
2.4.2 Ռեսուրսները	17
2.4.3 Տեղական կառավարման մարմիններ	18
2.4.4 Տուրիստական ծառայություններ Եւ Միջոցառումներ	18
2.4.4.1 Սևնդի սպասարկում	18
2.4.4.2 Գիշերակաց	18
2.4.4.3 Միջոցառումներ Եւ փառատոններ	19
2.4.5 Ենթակառուցվածքներ	19
2.4.5.1 ճանապարհներ Եւ տրանսպորտ	19
2.4.5.2 ճանապարհային նշաններ	19
2.4.5.3 Ներահաղորդակցություն	19
2.4.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	19
2.4.5.5 Տեսարժան վայրեր	20
2.5 ԾԱՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՍԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	20
2.5.1 Ընդհանուր ակնարկ	20
2.5.2 Ռեսուրսներ	21
2.5.3 Տեղական կառավարման մարմիններ	21
2.5.4 Տուրիստական ծառայություններ Եւ Միջոցառումներ	21
2.5.4.1 Սևնդի սպասարկում	21
2.5.4.2 Գիշերակաց	22
2.5.4.3 Միջոցառումներ Եւ փառատոններ	22
2.5.5 Ենթակառուցվածքներ	22
2.5.5.1 ճանապարհներ Եւ տրանսպորտ	22
2.5.5.2 ճանապարհային նշաններ	22
2.5.5.3 Ներահաղորդակցություն	22
2.5.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	23
2.5.5.5 Տեսարժան վայրեր	23
2.6 ԼԵՌԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՍԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	23
2.6.1 Ընդհանուր ակնարկ	23
2.6.2 Ռեսուրսները	24
2.6.3 Տեղական կառավարման մարմիններ	25
2.6.4 Տուրիստական ծառայություններ Եւ Միջոցառումներ	25
2.6.4.1 Սևնդի սպասարկում	25
2.6.4.2 Գիշերակաց	26
2.6.4.3 Միջոցառումներ Եւ փառատոններ	26
2.6.5 Ենթակառուցվածքներ	26
2.6.5.1 ճանապարհներ Եւ տրանսպորտ	26
2.6.5.2 ճանապարհային նշաններ	26
2.6.5.3 Ներահաղորդակցություն	26
2.6.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	26
2.6.5.5 Տեսարժան վայրեր	27
2.7 ՎԱՐԴԱՆԻՉՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՍԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	27
2.7.1 Ընդհանուր ակնարկ Եւ ռեսուրսներ	27
2.7.2 Տեղական կառավարման մարմիններ	28
2.7.3 Տուրիստական ծառայություններ Եւ Միջոցառումներ	28
2.7.3.1 Սևնդի սպասարկում	28

2.7.3.2 Գիշերակաց.....	28
2.7.3.3 Միջոցառումներ Եւ փառատոններ	28
2.7.4 Ենթակառուցվածքներ	28
2.7.4.1 ճանապարհներ Եւ տրանսպորտ	28
2.7.4.2 ճանապարհային և շանսներ	28
2.7.4.3 Հեռահաղորդակցություն	29
2.7.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ.....	29
2.7.4.5 Տեսարժան վայրեր.....	29
3 ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՈՂ «ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԽՈՒՍՏՈՒՓ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ՄԱՍԻՆ	30
3.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ	30
3.2 ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐ	32
3.3 ԶԲՈՍՎԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	32
3.4 ԳԻԾԵՐԱԿԱՑ	33
3.5 ՍՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	33
3.5.1 Հասարակական սննդի կետեր	33
3.5.2 Էթնիկ ճաշատեսակներ	33
3.6 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	34
3.7 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
3.7.1 Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում Եւ ռազմավարություն (օպցիոնալ).....	35
3.7.2 Ծառայությունների ձեւավորում	35
3.7.3 Ենթակառուցվածքներ	36
3.7.4 Ծառայությունների ձեւավորում	36
4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38
4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հետազոտված շահառուների ցանկը	38
4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հետազոտության գործիքը	39
5 Ի. Անձնական տվյալներ	39

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, քնական տարածքների մեծամասշտար յուրացումը, կլիմայի փոփոխությունները բերել են էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտմանը: Պատճառահետեւանքային ազդեցությունները, ընդհանուր առմամբ, ներառում են խոցելի քնակմիջավայրերի դեգրադացումը, բուսական եւ կենդանական տեսակային կազմի նվազեցումը եւ էկոհամակարգային համալիր մոտեցումների ոչ լիարժեք կիրառումը: Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (քնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները:

Գլոբալ Էկոլոգիական Յիմսադրամի (ԳԵՅ) եւ ՄԱՀԾ կողմից ֆինանսավորվող, ՀՀ Բնապահպանության նախարարության եւ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը նպատակ ունի անդրադառնալ Վերը ներկայացված խնդիրներին եւ գլոբալ առումով նպաստել կենսաբազմազանության պահպանմանը Հայաստանում: Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը (հետայսու՝ Ծրագիր) ներառելու է հետեւյալ բաղադրիչները:

1. Պահպանվող տարածքների օպտիմալացում արգելավայրերի հիմնադրման եւ գործարկման կարգավորիչ եւ ինստիտուցիոնալ շրջանակները բարելավելու միջոցով:
2. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում արգելավայրերի կառավարման մի շարք մոդելների ներկայացման (որոնք հիմնականում բացակայում են Հայաստանի Պահպանվող Տարածքների (ՊՏ) կառավարման ներկա ռեժիմից) միջոցով:

Ծրագրի գործողությունների իրականացման արդյունքում կզարգանա բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ-ների) համակարգը՝ ներառելով մինչ օրս ոչ լիարժեք կերպով ներկայացված էկոհամակարգերը (լեռնամարգագետնային հողեր, ենթալպյան բարձրադիր լեռներ, ալպյան լեռներ) եւ կենսաբազմազանությունը, միաժամանակ նպաստելով աղքատության հաղթահարմանը եւ տնտեսական ու ֆինանսական կայունության հաստատմանը ԲՀՊՏ-ների տարածում: Ծրագրի ներդրումն արտահայտվում է համայնքներում կառավարման գործընթացը բարելավելու միջոցով՝ միաժամանակ օժանդակելով հաղորդակցության բարելավմանը եւ աղքատության նվազեցմանը: Ծրագրի արդյունքում կմեծանա Հայաստանի ԲՀՊՏ-ների ֆինանսական կայունությունը: Հայաստանի պահպանվող տարածքների սահմաններից դուրս գտնվող այս էկոհամակարգերը կարեւորագույն դեր են խաղում բազմաթիվ համաշխարհային նշանակության տեսակների, այդ թվում՝ մեծ թվով ագրո-կենսաբազմազանության ռեսուրսների երկարաժամկետ պահպանման համար¹:

Ծրագրի իրականացման ներքո ԲՀՀ-Հայաստանի կողմից նախաձեռնվել է երեք առանձին մասերից բաղկացած լայնածավալ հետազոտություն՝ ա) Գործող եւ նախատեսվող ԲՀՊՏ-ների շահառուների հետազոտություն, բ) ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակային հետազոտություն եւ գ) Տուրիզմի զարգացման ներուժի գնահատում: Սույն առաջադրանքը հանձնարարվել է «ԱՄ Փարթևը Զոնսալթինգ Քամփինի» ՍՊԸ հայկական խորհրդատվական

¹ Ամբողջ բաժինը վերցված է առաջադրանքի տեխնիկական առաջարկից

ընկերությանը: Սույն հաշվետվությունն ամփոփում է Սյունիքի ԲՀՊՏ-ներում տուրիզմի զարգացման գնահատման նպատակով իրականացված հետազոտության արդյունքները:

1.2 ՄՊԱՏԱԿՆԵՐԸ

1.2.1 Խնդիրներ Եւ առաջադրանքներ

Գործող «Զանգեզուր» Եւ պլանավորվող «Գնիշիկ» Եւ «Խուստուփ» արգելավայրերի *Տուրիզմի ներուժի գնահատումը (ՏՊԳ)* հանդիսանում է շահագրգիռ կողմերի վերլուծության գնահատման առանձին մասը: ՏՊԳ առաջադրանքը բաղկացած է հետեւյալ մասերից:

- Բացահայտել արգելավայրերում տուրիստական Եւ տեսարժան այլ վայրերի առկայությունը, ներառյալ բնական Եւ պատմական հուշարձանները, ռեկրեացիոն հնարավորությունները Եւ այլն,
- Գնահատել տուրիստական ենթակառուցվածքների Եւ ծառայությունների առկայությունը Եւ վիճակը, (ներառյալ հյուրանոցներ, հյուրատներ, տրանսպորտային ծառայություններ, սրճարաններ Եւ ռեստորաններ, գրոսավարներ, թարգմանիչներ Եւ այլն):
- Ուսումնասիրել մշակութային ավանդույթների առկայությունը Եւ կիրառության աստիճանը:
- Գնահատել տուրիստական երթուղիների առկայությունը Եւ նպատակային տարածքներում աշխատող տուր օպերատորների գործունեության ինտենսիվությունը:
- Ուսումնասիրել գրոսաշրջիկներ ընդունելու Եւ սպասարկելու նկատմամբ բնակչության վերաբերմունքը
- Այլ հարակից խնդիրներ:

Սույն ՏՊԳ-ի ուսումնասիրության առարկա Են դարձել բազմաթիվ խնդիրներ, որոնք օգնում են հասկանալ արգելավայրերի հարակից համայնքների տուրիզմի զարգացման ներուժը: Այն բացահայտում է թիրախային տարածքների ուժեղ կողմերը Եւ խնդիրները՝ առկա իրավիճակի հետեւողական ուսումնասիրության Եւ վերլուծության միջոցով²:

Ներկայացված արդյունքները պետք է (կարող Են) օգտագործվեն նախատեսվող արգելավայրերի կառավարման պլանների կազմման ընթացքում:

1.2.2 Մեթոդաբանություն

1.2.2.1 *Տեղեկությունների հավաքագրում*

ՏՊԳ հաշվետվությունը պատրաստելու համար օգտագործվել Են առաջնային Եւ երկրորդային տեղեկատվության աղբյուրներ: Մշակվել է հարցաշար Եւ իրականացվել Են շահառուների անհատական հարցումներ³ (տե՛ս Հավելված 1-ում ներկայացված հարցաշարին մասնակցած շահառուների ցանկը): Այցելություններ Են կատարվել և ախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» Եւ գործող «Զանգեզուր» ԲՀՊՏ-ներին հարակից համայնքներ, ինչպես նաև Վայոց Ձորի Եւ Սյունիքի մարզպետարաններ: Կազմակերպվել Են հանդիպումներ բոլոր համայնքների ղեկավարների, հասարակական կազմակերպությունների Եւ մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների, հյուրատների սեփականատերերի Եւ համայնքների անդամների հետ:

² Ամբողջ բաժինը վերցված է առաջադրանքի տեխնիկական առաջարկից

³ Տե՛ս Հավելված 1-ում Եւ 2-ում ներկայացված մասնակցած շահառուների ցանկը Եւ հարցաշարը

Երկրորդային աղբյուրները ներառում են Սյունիքի տարածքային զարգացման պլանը, Էկոտուրիզմի համաշխարհային համագումարի Էկոտուրիզմի ծառայությունների մշակման, մարքեթինգի Եւ խթանման վերաբերյալ հաշվետվությունը, ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից պատրաստված «Զանգեզուր» պետական արգելավայր», «Շիկահողի պետական արգելոց» բրոցյուրները Եւ Յայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզը, Չբոսաշրջության զարգացման բնագավառում ԱՄՆ դեսպանության Եւ Սյունիքի մարզպետարանի համագործակցության վերաբերյալ տեղեկանքը, ԱՄՆ Մ2Գ «Մրցունակ մասնավոր հատված Յայաստանում (CAPS) Ծրագրի կողմից կատարված «Օտարերկրյա տուրիստական օպերատորների կարծիքներն ու տպավորությունները Յայաստանի մասին» Եւ «Յայաստանի ճամփորդության Եւ զբոսաշրջության մրցունակության վերլուծություն» ուսումնասիրությունները:

1.2.2.2 Տեղեկատվության դասակարգում Եւ վերլուծություն

Յավաքագրվել է տեղեկատվություն զբոսաշրջային ծառայությունների հետեւյալ ոլորտների՝ գիշերակացի հնարավորությունների, սննդի սպասարկման, տրանսպորտի, զբոսավարության Եւ ուղեկցման ծառայությունների, Փինանսական ծառայությունների առկայության, բժշկական ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական Եւ մշակութային Ենթակառուցվածքների (ճանապարհներ, հեռահաղորդակցություն, ջրամատակարում Եւ ջրահեռացում, աղբահեռացում, կրթություն, սպորտ, մշակույթ Եւ այլն), ինչպես նաև պատմական Եւ բնական հուշարձանների վերաբերյալ:

Ուսումնասիրության նպատակը գործող «Զանգեզուր» Եւ նախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» արգելավայրերի Էկոտուրիզմի ներուժի գնահատումն է, ինչպես նաև ծառայությունների Եւ Ենթակառուցվածքների առկայության Եւ վիճակի ուսումնասիրությունը: Առաջարկներ են ներկայացվել նաև Էկոտուրիզմի զարգացման պահանջներին համապատասխան այս ծառայությունների ու Ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ:

Եզրահանգումները կատարվել են ԱՄ Փարթեզրդ Թոնսալթինգ Քամփնի ընկերության մասնագետների Եւ զբոսաշրջության ոլորտի վերլուծություն կատարելու նպատակով հատուկ հրավիրված փորձագետի կողմից:

2 ԳՈՐԾՈՂ «ՉԱՆԳԵԶՈՒՐ» ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԽՈՒՍՏՈՒՓ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

2.1.1 Ներածություն

Ներկայում գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի տարածքում էկոտուրիզմը ներկայացված է տուրիստական գործակալությունների կողմից կազմակերպվող պատահական ուղեւորություններով եւ սփյուռքահայերի ու ներքին զբոսաշրջիկների այցերով, ովքեր գալիս են տեսնելու իրենց հարազատներին եւ մտերիմներին կամ գալիս են բարձրանալու խուստուփ լեռը՝ հիմնականում ընկերների հետ զբոսախնջույք կազմակերպելու նպատակով: Որոշ տեղաբնակներ բարձրանում են խուստուփ լեռը հեթանոսական արարողություններ կատարելու համար, քանի որ խուստուփը համարվում է Յայաստանում հեթանոսների կարեւոր խորհրդանշիչներից մեկը: Տարվա բոլոր ժամանակներին այստեղ են գալիս նաեւ որսորդությամբ, այդ թվում, պահպանվող կենդանիների ապօրինի որսով զբաղվելու համար:

Նկար 1 - Խուստուփ լեռը



Ընդհանուր առմամբ, գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրեր կատարվող բոլոր այցերն իրենց մեջ ներառելու են էկոտուրիզմի տեսակներ, այդ թվում հետիոտն արշավներ, սարեր բարձրանալը, արկածային տուրիզմը, քանի որ պատմական հուշարձանները հիմնականում գտնվում են անտառներում, ձորերում, սարերում՝ դժվար անցանելի վայրերում: Երեմս մի քանի կիլոմետր է պետք ե անցնել այդ հուշարձաններին հասնելու համար: Պատմական հուշարձանների մեծ քանակը, հարուստ բուսական եւ կենդանական աշխարհը, հատուկ պահպանվող տարածքների առկայությունը (արդեն ձեւավորված «Չանգեզուր» արգելավայրը եւ «Ծիկահող» պետական արգելոցը) լուրջ հևարավորություններ են ստեղծում էկոտուրիզմի զարգացման համար, մինչդեռ այս հևարավորությունների մասին անտեղյակությունը, ինչպես նաեւ ենթակառուցվածքների թույլ զարգացած լինելը կամ բացակայությունը խոչընդոտելու է տուրիզմի ոլորտի զարգացումը: Կոնկրետ խնդիրները ներառում են.

- Յայաստանի տուրիստական գործակալություններից շատերը տեղեկացված չեն գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի եզակի ռեսուրսների մասին: Յայաստանյան եւ արտասահմանյան տուր օպերատորների համար ճանաչողական այցեր չեն կազմակերպվում որեւէ պատասխանատու կառուցների կողմից,
- Արգելավայրերի հեռավորություննը Երեւանից մեծ է, ինչը հոգևորությի է դարձնում ճանապարհորդությունը,

- Երկար ճանապարհորդության դեպքում ճանապարհների վիճակը պետք է լավը լինի, միևնույն մայրուղին կարիք ունի վերանորոգման հատկապես Գորիսից Կապան տանող հատվածում,
- Զբոսաշրջային ծառայությունները՝ գիշերակացը, սննդի սպասարկումը, զբոսաշրջային ծառայությունը եւ ճանապարհափոխադրումը թույլ են զարգացած,
- Կապանը եւ Ջաջարանը ասոցացվում են աճող լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հետ եւ որ այն աղտոտում է բնությունը եւ վնասում մարդկանց առողջությունը:

Յեռավորությունը Երեւանից, ինչպես նաև Իրանին սահմանակից լինելը կարեւոր դեր են խաղում շուկայի ընտրության հարցում: Անհրաժեշտ է կարողությունների հզորացման օժանդակություն հատկացնել տուրիստական ապրանքի ձեւավորման, ապրանքանիշ մշակելու եւ խթանելու համար՝ նաև համաձայն իրանական շուկայի պահանջների: Օժանդակության կարիք է լինելու նաև ծառայությունների որակը բարձրացնելու համար: Իրանական շուկա մտնելու հնարավորություններն ավելի մանրամասն ներկայացված են ստորեւ:

- Իրանին սահմանակից լինելը եւ այդ երկրի քաղաքացիների աճող հոսքը Յայաստան, որոնց մեծ մասը ճանապարհորդում է հետազոտված համայնքների տարածքով: Վիճակագրական ստույգ տվյալները չկան, սակայն ենթադրվում է, որ Յայաստան այցելած 120,000 իրանացի քաղաքացիների մեծ մասն անցնում է Սյունիքի մարզի տարածքով՝ անձնական մեքենաներով եւ ավտոբուսներով:
- Իրանական մշակույթը, իրանի քաղաքական ազրեցությունը Յայաստանում, ինչպես նաև Յայաստանի եւ Իրանի քաղաքական ելիտայի հարաբերությունները ցուցադրող հուշարձանների առկայությունը նախաքրիստոնեական շրջանից մինչեւ 1828թ.:
- Իրանում քրիստոնեական քնակշության առկայությունը՝ ներկայացված հիմնականում հայերով, որոնք կարող են հետաքրքրացնելու ուղղությունը՝ ներկայացված հայերությունը մեջ:

Այլ հնարավորությունների մեջ մտնում են.

- Թեմատիկ ուղեւորություններ կազմակերպելու համար ռեսուրսների առկայությունը: Արգելավայրերում կան բազմաթիվ հուշարձաններ, որոնք կապված են ազգային-ազատագրական շարժման հետ վաղ եւ միջին միջնադարում, որոնք դեկավարել են Բաղակ իշխանը, Դավիթ Բեկը, Միհիթար Սպարապետը եւ այլ առաջնորդներ: Հուշարձաններ կան նաև 1920-21թթ. Գարեգին Նժդեհի կողմից դեկավարած շարժման վերաբերյալ:
- Եթոնուրիզմը, պայմանավորված ավանդական խոհանոցով, հարուստ ավանդույթներով, զանգեզուրցիների խիստ քնակշությամբ, հայրենասիրությամբ, կրթության նկատմամբ մեծ հարգանքով եւ միհաժամանակ համառությամբ: Եթոնիկ առանձնահատկությունների ուսումնասիրությունը հարստացնում է պատմամշակութային տուրիզմի բովանդակությունը եւ իմաստավորում այն. օգնում է բացատրել Սյունիքի պատմական հաջողությունները օտար զավթիչների նկատմամբ եւ հասկանալ թե ինչու հենց Սյունիքում արմատավորվեց ցեղակրոնությունը, ինչու եր հայկական այբուբենը ստեղծող Մեսրոպ Մաշտոցը թարգմանչական գործը վստահում միայն սյունյաց վարդապետներին, ինչու պատմական Յայաստանի խոշորագույն համայնքարանը գտնվում էր հենց Սյունիքում՝ Տաթեւի վանքում, եւ թե ինչու Սյունիքը դարձավ հայկական կերպարվեստի եւ մանրանկարչության խոշորագույն կենտրոններից մեկը:
- Դամբարանադաշտերի եւ միջնադարյան քնակավայրերի մեծ քանակը հնարավորություն է ստեղծում մշակութային եւ հնագիտական տուրիզմի զարգացման համար:
- Պատմամշակութային տուրիզմի զարգացման հնարավորությունները սերտորեն կապված են Եկոտուրիզմի հետ, քանի որ հուշարձանների մեծ մասը գտնվում է սարերի լանջերին կամ ձորերում: Այս հանգամանքը ուժեղացնում է պատմամշակութային տուրիզմի հնարավորությունները, սակայն, առանձին դեպքերում ստեղծում է լրացուցիչ բարդություններ,

քանի որ որոշ հուշարձաններ գտնվում են դժվար անցանելի վայրերում (օրինակ՝ Կապանի հին բերդաքաղաքը):

- Սյունիքի մարզի զարգացման վերաբերյալ ՀՀ Կառավարության թիվ 782 որոշումը, որը հատուկ շեշտադրում ունի էկոտուրիզմի վրա:

Ի տարբերություն նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի՝ գործող «Չանգեզուր» Եւ նախատեսվող «Խուստուիփ» արգելավայրերի հարակից համայնքների բնակչությունը բացասական վերաբուրմունք ունի արգելավայրերի և կատմամբ: Գյուղացիներն այստեղ ավելի քիչ պատկերացում ունեն արգելավայրերի կողմից ընձեռնված հնարավորությունների Եւ սահմանափակումների մասին Եւ լուրջ մտահոգություններ ունեն, որ չեն կարողանալու օգտագործել արոտավայրերը Եւ ծառեր կտրեն, որոնք շերմություն ստանալու հիմնական աղբյուրն են: Արգելավայրի մասին նրանց գիտելիքները սահմանափակվում են «Շիկահողի» ՊԱ կողմից դրված սահմանափակումներով, որտեղ խստիվ արգելվում է բնական ռեսուրսների օգտագործումը:

2.1.2 Էկոտուրիզմի սոցիալ-տնտեսական Եւ մշակութային ազդեցությունը

Էկոտուրիզմն ունի տեղական մակարդակով աշխատատեղերի ստեղծման Եւ եկամտի ձեւավորման մեջ ներուժ, քանի որ այն նպատակ ունի գրավել բնությունը տեսնել Եւ վայելել ցանկացողներին, ովքեր իրենց այցելության ժամանակ վճարում են զանազան ծառայությունների՝ սննդի, կացարանի, զբոսավարության Եւ ուղեկցման, տրանսպորտի, սարքավորումների Եւ այլնի համար: Այս նաեւ լուրջություն նպաստում է վայրի բնության պահպանմանը, քանի որ էկոտուրիզմից ստացվող հարկային մուտքերի ավելացման շնորհիվ հնարավոր է դառնում ֆինանսավորել բնության վերականգնման Եւ պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները: Սակայն կան նաեւ բազմաթիվ օրինակներ, երբ էկոտուրիզմից գոյացած միջոցները «հոսում են» դուրս, քանի որ տեղում չկան անհրաժեշտ հմտություններ, սննդի սպասարկման ծառայություններ կամ գիշերակացի հնարավորություններ: Կան նաեւ բնության վրա էկոտուրիզմի զարգացման բացասական ազդեցությունների մասին վկայող բազմաթիվ օրինակներ, երբ չեն գործում շրջակա միջավայրի պաշտպանության համապատասխան հաստատություններ կամ կանոնակարգեր, կամ երբ կարգավորման գործընթացում գերակայությունը տրվում է եկամուտ վաստակելուն:

Էկոտուրիզմի զարգացումը կարող է նաեւ լուրջ բացասական ազդեցություն թողնել տեղական մշակույթի վրա, քանի որ անհրաժեշտ է «ցույց տալ տեղական մշակույթը Եւ ծառանգությունը, մինչեւ հաճախ դրանք «փաթեթավորվում» են, հարմարեցվելով արեւմտյան ակնկալիքներին: Մշտական վտանգ է հանդիսանում սովորույթների որակագրկումը, երբ դրանք վերածվում են փոփ մշակույթի»⁴:

Շահառուների հետ հանդիպումները վկայում են, որ գործող «Չանգեզուր» Եւ նախատեսվող «Խուստուիփ» արգելավայրերի համայնքները բնակիչները Եւ դեկավարները լրջորեն հետաքրքրված են էկոտուրիզմի եկամուտների ստացման հեռանկարով Եւ պատրաստ են առկա միջոցներով նպաստել էկոտուրիզմի զարգացմանը, մինչեւ շրջակա միջավայրի պահպանության մասին մտահոգությունները հիմնականում արտահայտվում են ՀԿ-ների Եւ ներկայումս էկոտուրիզմի ծառայություններ մատուցող գործակալությունների կողմից: Հարցմանը մասնակցած երկու տուր օպերատորներն ել («Ավարայր», «Արևածային Հայաստան») ցանկանում են մասնակցել Եւ աջակցել ՊՏ-ների ստեղծման գործընթացին՝ օգտագործելով իրենց ընկերությունների ռեսուրսները:

⁴ Հղում՝ Effects of Ecotourism, Oct. 31st, 2008, Saikat, <http://www.aboutmyplanet.com/environment/effects-ecotourism/>

2.2 ԳԵՂԱՆՈՒՅՆԱՅԻ ՀԱՍԱՅՆԵՐԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

2.2.1 Ընդհանուր ակնարկ

Գեղանուշ համայնքը գտնվում է Խուստուփ լեռան ճանապարհին, մարզային կենտրոն Կապանից ընդամենը 6 կմ հեռավորության վրա: Յամայնքի վարչական տարածքում կան բազմաթիվ պատմական հուշարձաններ և երաժշտական գյուղատեղիներ՝ եւ նախաքրիստոնեական շրջանի դամբարաններ, իսկ գյուղի տարածքում կան մի քանի հին տներ: Գյուղն ունի հետաքրքիր ավանդույթներ, ինչպես նաև առասպելներ եւ հետաքրքիր պատմություններ՝ կապված Գեղանուշում ծնված խիզախ մարդկանց հետ: Գեղանուշ տանող ճանապարհն անցնում է «Deno Gold Mining» ընկերության պոչամբարի մոտով, որի շրջակայքն անավարտ շինարարության օբյեկտ է հիշեցնում, քանի որ ամբարտակի կառուցումն ավարտելուց հետո տարածքը չի բարեկարգվել: Տաք եղանակին պոչամբարից քիմիական նյութերի տիհած հոտ է գալիս, իսկ ճանապարհի մի քանի հատվածները վերածվել են կենցաղային աղբի եւ թափոնների կուտակման վայրերի:

Չբռաշշրջության գարգացման հնարավորություններից են հետիոտն արշավները՝ հատկապես ճակատներից դեպի Գեղանուշ հատվածում, պատմամշակութային հուշարձանների առկայությունը եւ գյուղը շրջապատող գեղատեսիլ տեղանքը: Գեղանուշը կարող է հանգրվան դառնալ Խուստուփի ճանապարհորդելու ժամանակ, որտեղ կարելի է իմանալ տեղական ավանդույթների մասին, ճաշակել ավանդական ճաշատեսակներ եւ լսել հետաքրքիր պատմություններ հայտնի եւ քաջ մարդկանց մասին, ովքեր ծնվել են այստեղ: Յիմսական խնդիրը կապված է պոչամբարի հետ, որը գտնվում է համայնքի վարչական տարածքում եւ հարակից է գյուղ տանող ճանապարհին: Լուրջ խնդիր է նաև մարդու առողջության համար այդ պոչամբարի ազդեցության մասին լիարժեք տեղեկատվության բացակայությունը: Գեղանուշից Խուստուփ լեռ տանող ճանապարհի վատ վիճակը նույնպես լուրջ խնդիր է, քանի որ այն հնարավորություն չի տալիս օգտվել գյուղի հիմնական առավելությունից՝ Խուստուփ լեռան ճանապարհին գտնվելու հանգամանքից: Կապանից Գեղանուշ տանող ճանապարհը նույնպես կարիք ունի վերանորոգման, թեեւ այն անցանելի է:

Նկար 2 - Deno Gold ընկերության պոչամբարը Գեղանուշում



Գյուղում օտար լեզու իմացողներ չկան: Օտար լեզվի ուսուցիչը գյուղ է գալիս Կապանից: Տեղական ընակյությունը կարող է ապահովել ուղեկցողներ, որոնք ծանոթ են տեղանքին եւ գիտեն աղբյուրների, պատմական հուշարձանների եւ վրանային ճամբարների համար հարմար վայրերի տեղերը:

2.2.2 Ռեսուրսները


Գյուղում կան երկու եկեղեցիներ: Սուրբ Յօհանոսի եկեղեցին, որը կառուցվել է 1878թ. Եւ նրա մոտ գտնվող IX-X-րդ դարի փոքրիկ մատուռը: Եկեղեցու բակում կան նաեւ XVII-XVIII դարերի գերեզմաններ: Եկեղեցում դրված են նախաքրիստոնեական դարաշրջանին պատկանող մի քանի Վիշապաքարեր: Յամայսրի վարչական տարածքում են գտնվում մի քանի հին գյուղատեղիներ, որոնցից են Վերին Մրահարկը (գյուղից 4 կմ դեպի արեւմուտք, որն ունի XIII դ. հին եկեղեցի), Շենատեղը (նույնպես հին եկեղեցով) եւ Տանձուտը: Կարեւոր հուշարձաններից են դամբարանները, որոնք հավանաբար կառուցվել են մոտ 4,000 տարի առաջ եւ առաջմ չեն պեղվել:

Խուստուի լեռում կա մի քարանձավ, որն ուխտատեղի է քրիստոնյաների համար: Վերջիններս հատուկ գալիս են այստեղ Քրիստոսի կերպարանափոխությունը նշելու համար: Ջարանձավի առաստաղից ջուր է կաթում եւ փոքրիկ լճակներ են ձեւավորվել հատակին: Ջարանձավը գտնվում է ճանապարհից ընդամենը 30 րոպե քայլելու հեռավորության վրա, որը հարմար է քայլարշավի համար, սակայն դեպի քարանձավ գնացող կածանն անցնում խոր ձորով, որը հնարավոր չէ անցնել առանց մասնագետ զբոսավարի օգնության կամ հատուկ սարքավորումների:

Գյուղն ունի մի քանի հին տներ, որոնք կառուցվել են XIX դարում, մինչեւ այժմ ունեն բնակիչներ, եւ գտնվում են Սյունիքի պահպանվող հուշարձանների ցանկում: Երկու այլ հին տներ որոնցից մեկում տեղակայված է համայսրի գրադարանը, գտնվում են վթարային վիճակում: Մի քանի տներ նկուղային հատվածում ունեն տեղացիների լեզվով ասած «Ղափ», որը կիսակլոր առաստաղով կառույց է եւ գյուղացիների կողմից օգտագործվել է որպես բնակարան: Այստեղ են պահվել նաև անասունները, որոնք առանձնացված են եղել հիմնական սրահից փայտե միջնապատով: Դա արվել է այն նպատակով, որպեսզի անասունները իրենց շերմությամբ տաքացնեն նաեւ բնակարանը:

Գեղանուշում են ծնվել Մուխան Էլչիբեկյանը, ով 1918թ. եղել է Դաշնակցական կուսակցության Բյուրոյի անդամ, Գարեգին Նժեհի տեղակալ Գերասիմ Աթանազյանը, ԽՄՀՍ Նախարարների Խորհրդի նախագահի տեղակալ Լեռնիդ Կոստանդովը, Յայրենական մեծ պատերազմի հերոս Մուշեղ Յարությունյանը եւ աշխատանքի հերոսուհի Գոհարիկ Սարինյանը: Այս մարդկանց հերոսական անցյալից հայտնի են քազմաթիվ պատմություններ, որոնք կարող են ընդգրկվել զբոսաշրջային գովազդային նյութերում: Պահպանվել են նաեւ այդ մարդկանց մի քանի տներ, որոնք կարող են վերածվել թանգարանների:

Նկար 3 - Սուրբ Յօհանոսի եկեղեցին Սյունիքում



Նկար 4 - Գեղանուշ համայսրի «Ղափերը»



Տների մի մասն ունեն նաեւ «դափեր», որտեղ կարելի է կազմակերպել հյուրասիրություն 20-30 հոգանոց խմբերի համար: Գյուղև այսօր էլ ունի հետաքրքիր անձնավորություններ, որոնցից է Պավել Բադայյանը, համայնքի նախկին ղեկավարը, ով կարող է տեղեկություններ տրամադրել գյուղի մասին եւ կարող է օգնել գեղեցիկ պատմություններ պատրաստելու հարցում:

Գեղանուշը հարմար է պատմամշակութային տուրիզմի, լեռնամագլցման, արշավների, վրանային ճամբարների եւ հնագիտական տուրիզմի զարգացման համար:

2.2.3 Տեղական կառավարման մարմինները

Տեղական ինքնակառավարման մարմինները տեղյակ են արգելավայրի ստեղծման մասին եւ ունեն մտահոգություններ, որ արգելավայրը սահմանափակելու է արոտավայրերի, վարելահողերի եւ անտառի օգտագործումը, որից ստացված փայտը իրենց համար հանդիսանում է ջերմության միակ աղբյուրը: Յամայնքի ղեկավարի տեղակալը մասնակցել է արգելավայրի ձեւավորմանը նվիրված մեկ հանդիպման, սակայն ի վիճակի չեր մտաբերելու դրա օգտագործմանը վերաբերվող կարգի, կառավարման եւ սահմանների մասին քննարկումների արդյունքները: Յամայնքապետարանի աշխատակազմը պատրաստ է աշակել, սակայն պատկերացում չունի տուրիզմի զարգացման հնարավորությունների եւ ձեւերի մասին:

2.2.4 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ

2.2.4.1 Սևնդի սպասարկում

Սևնդի սպասարկման հնարավորություններ Գեղանուշում չկան: Ամենամոտ ռեստորանը գտնվում է Կապանում, Գեղանուշից 7 կիլոմետր հեռավորության վրա:

2.2.4.2 Գիշերակաց

Յամայնքում գիշերակացի հնարավորությունները նույնական չեն, սակայն 5-7 տներ որոշ վերանորգում կատարելուց հետո կարող են որպես հյուրատուն ծառայել: Այս տներն ունեն կահավորված նշարաններ, մաքուր սանհանգույցներ բնակարանների ներսում եւ մշտական ջուր: Այս տների տերերը, որոնք նախկինում զբոսաշրջիկներ սպասարկելու փորձ չեն ունեցել, հյուրեր ընդունելուց առաջ պետք է հյուրընկալության վարժանքների մասնակցեն:

2.2.4.3 Միջոցառումներ եւ փառատոններ

Յամայնքում ուրեմն կանոնավոր միջոցառումներ, փառատոններ կամ տոնակատարություններ չեն իրականացվում:

2.2.5 Ենթակառուցվածքներ

2.2.5.1 Ճանապարհներ եւ տրանսպորտ

Գեղանուշ համայնքը գտնվում է Կապանից 5-7 կմ հեռավորության վրա: Յասարակական տրանսպորտը համայնքի եւ Կապանի միջեւ աշխատում է օրական 3 անգամ, շաբաթական 6 օր: Այս

ճանապարհն ասֆալտապատ է, սակայն վիճակը վատ է. այն անանցանելի է տարեկան մոտ 10 օր։ Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն եւ նույնպես գտնվում են վատ վիճակում։

2.2.5.2 Ճանապարհային նշաններ

Միակ առկա ճանապարհանշանը համայնքի անունը կրող նշանն է, որը գտնվում է համայնքի մուտքի մոտ։

2.2.5.3 Հեռահաղորդակցություն

Գեղանուշ համայնքի բոլոր տներում կա կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապ։ Լիովին հասանելի են շարժական հեռախոսակապի բոլոր երեք տեղական օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները։ Յամացանցի ծառայությունների տեղական մատակարարներ չկան։ համացանցը հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով։ Փոստային կապ համայնքում չի գործում ե։ Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 2 եւ ռադիոյի 4 ալիքներ։ Հեռահաղորդակցության մակարդակը բուև համայնքում կարելի է բավարար համարել։

2.2.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Գեղանուշում գործում է միջնակարգ դպրոց՝ 38 աշակերտներով։ Սպորտային դահլիճ եւ խմբակներ չկան։ Գործում է բուժկետ՝ 1 բույրով։ Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մերես։ Յամայնքում մշտական գործում են գրադարան։ Մշակույթի տունը վատ վիճակում է եւ հետագա վերանորոգման պարագայում իր ներդրումը կարող է ունենալ տուրիզմի զարգացման գործում։

2.2.5.5 Տեսարժան վայրեր

Գեղանուշ համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել։

- Խուստուփ լեռ տանող ճանապարհը եւ լեռան քարանձավները,
- Սուլը Յարիկսիմե Եկեղեցին եւ գերեզմանները,
- Եկեղեցու բակում գտնվող IX-X դարի մատուռը,
- Յին գյուղատեղիներն իրենց Եկեղեցիներով,
- Դամբարանադաշտերը,
- XIX դարում կառուցված տները՝ «ղափերը»։

2.3 ճԱԿԱՏԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

2.3.1 Ընդհանուր ակնարկ

Ճակատեն համայնքը գտնվում է Կապանից 9 կիլոմետր հեռավորության վրա։ Կապանին մոտ լինելու, նորակառուց ճանապարհի լավ վիճակի, ինչպես նաև գեղատեսիլ տեղանքի, մաքուր ջրի բնական աղբյուրների եւ այդ աղբյուրներին կից տաղավարների առկայությունը ճակատեն են բերում բազմաթիվ տեղացի այցելուներ, ովքեր հիմնականում գալիս են Կապանից՝ հանգստյան օրերին

զբոսանք Եւ խնջույքներ կազմակերպելու համար: Ճակատենք նաեւ Սյունիքի այն քիչ համայնքներից Եւ, որտեղ կան վերանորոգված ռեստորաններ:

Տուրիզմի զարգացման հնարավորությունները պայմանավորված են պատմական հուշարձանների առկայությամբ, խմելու ջրի բազմաթիվ աղբյուրներով, պատմական հուշարձանների Եւ աղբյուրների մոտ վրանային ճամբարների համար հարմար վայրերով, որոնք գտնվում են: Յարմար է նաեւ աշխարհագրական դիրքը. համայնքը գտնվում է Յայաստանը Իրանին կապող հիմնական մայրուղու վրա, որով ամեն տարի Յայաստան Են գալիս տասնյակ հազարավոր իրանցիներ: Թույլ կողմերից կարելի է նշել հաճախորդների սպասարկման հմտությունների պակասը, գիշերակացի հնարավորությունների բացակայությունը, զբոսանքների Եւ խնջույքների համար եկող այցելուներից Եւ համայնքի տարածքով ճանապարհորդող իրանցիներից լրացուցիչ եկամուտ ստանալու ծրագրի բացակայությունը: Վտանգներից է այն, որ ճակատենք սահմանակից է եղել Ադրբեջանին Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Եւ սահմանամերձ գոտին, որը թեւ ամբողջությամբ հայկական վերահսկողության տակ է, կարող է դեռեւ ականներ պարունակել:

Ճակատենում միակ օտար լեզու իմացողը միջնակարգ դպրոցի տևորեն է, ով տիրապետում է անգլերեն լեզվին:

Ընդհանուր առմամբ, գյուղացիները բացասական վերաբերմունք ունեն նոր ԲՀՊՏ-ների ձեւավորման նկատմամբ, քանի որ կարծում են, որ այն խանգարելու է նրանց գրադիւ գյուղատնտեսական աշխատանքներով՝ սահմանափակելով արոտավայրերի, վարելահողերի Եւ անտառների օգտագործման հնարավորությունները, ինչպես դա եղավ Շիկահողի ՊԱ ձեւավորման ժամանակ:

Ճակատեն ունի նոր վերանորոգված Մշակույթի տուն, որը կարող է օգտագործվել տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար:

2.3.2 Ուսուրսները

Ուսուրսները ներկայացված են Սուրբ Յօհանիսի եկեղեցով, գյուղից 4 կմ հեռավորության վրա գտնվող Գիլմեշա բնակավայրով, դեպի հարավ արեւելք գտնվող Իրիգիս միջնադարյան բնակավայրով, որն ունի դեռեւ չափված գերեզմանատուն Եւ դամբարանաշաշտ: Գյուղից 6-7 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում մեկ այլ գյուղատեղի, որը բնակեցված է եղել մինչեւ անցյալ դարի 30-ական թվականները: Կան նաեւ մի քանի այլ հին գյուղատեղիներ Եւս. Ծնդունը, Շինատեղը, Եկեղեցու խութը Եւ Քյալան, որն ունի ստորգետնյա ներ անցումներով մասամբ ավերված Եկեղեցի: Առկա է նաեւ XVII-րդ դարում կառուցված մի կամուրջ:

Գյուղից 6-7 կմ հեռավորության վրա կան հանքային ջրի աղբյուրներ: Տեղացի բնակիչներն այն անվանում են «Թթու ջուր»: Դեպի այդ աղբյուրներ գնացող ճանապարհն անցնում է ձորով Եւ անտառով, որտեղ կան վրանային ճամբարների համար հարմար վայրեր: Ամենագեղաց մեքենա ունենալու պարագայում աղբյուրին կարելի է մոտենալ մինչեւ 400 մետր: Դեպի աղբյուր գնացող կածանն անցնում է Ջալարտ կոչվող վայրով՝ այստեղ է գտնվում Ջալար կոչվող հին գյուղատեղին, որտեղ դեռեւ պահպանվել են որոշ կառույցներ: Ջալարտում կա նաեւ մի վայր, որտեղ համաձայն տեղաբնիկների, ձմեռում են արջերը:

Ճակատենը հարմար է պատմամշակութային տուրիզմի, արշավների, վրանային ճամբարների Եւ հնագիտական տուրիզմի զարգացման համար:

2.3.3 Տեղական կառավարման մարմիններ

Համայնքի ղեկավարությունն աչքի է ընկնում հեղինակությամբ, սակայն ունակությունների բարելավման լուրջ կարիք ունի: Համայնքի ղեկավարը տիրապետում է գյուղի պատմամշակութային եւ բնության հուշարձանների մասին տեղեկատվությանը եւ կարող է ուղեկցորդներ տրամադրել այդ հուշարձաններին հասնելու համար:

2.3.4 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ

2.3.4.1 Անդի սպասարկում

Ծակատենում կա հիմնական մայրուղու վրա կառուցված 70-80 նստատեղով ռեստորան: Ռեստորանը կառուցվել է 1980-ական թվականներին, բայց վերանորոգվել նոր սեփականատերերի կողմից: Վյստեղ մատուցվում են նոյն կերակրատեսակները, ինչ եւ ուրիշ ռեստորաններում՝ խոզի եւ հավի խորոված, քաբաբ, խաշլամա: Ռեստորանը պատվերի ղեպքում կարող է նաեւ մատուցել ավանդական կերակրատեսակներ: Տարածքը մաքուր է, սակայն աշխատակազմը հյուրընկալության եւ անգլերեն լեզվի հմտությունները բարելավելու կարիք ունի: Հարդարանքը գրավիչ չէ եւ էթնիկ մշակույթին համապատասխանելու համար բարեկարգման կարիք ունի:

2.3.4.2 Գիշերակաց

Գիշերակացի հևարավորությունները ներկայացված են 3-5 տևրով, որոնք ուսեւ բավարար պայմաններ որպես հյուրատուն աշխատելու համար եւ որոնց տերերը համաձայնվել են այցելուներ ընդունել: Սակայն մինչեւ հյուրեր ընդունելը, նրանք պետք է մասնակցեն հյուրընկալության դասընթացների եւ հաճախորդներին սպասարկելու նրանց կարողությունները պետք է գնահատվեն մասնագետների կողմից:

2.3.4.3 Միջոցառումներ եւ փառատոններ

Համայնքում միջոցառումներ եւ փառատոններ չեն կազմակերպվում:

2.3.5 Ենթակառուցվածքներ

2.3.5.1 Ծանապարհներ եւ տրանսպորտ

Ծակատեն համայնքը գտնվում է Կապանից 9 կմ հեռավորության վրա: Հասարակական տրանսպորտը (ղեպի Ծավ գնացող) համայնքի եւ Կապանի միջեւ աշխատում է օրական 1-2 անգամ, շաբաթական 5-6 օր: Այս ճանապարհն ասֆալտապատ է եւ գտնվում է շատ լավ վիճակում: Այն անցանելի է կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատ են (մոտ 1.5 կմ) եւ շատ լավ վիճակում են գտնվում, իսկ մյուս մասը (մոտ 1.9 կմ)՝ ասֆալտապատ չէ եւ վատ վիճակում է:

2.3.5.2 Ծանապարհային նշաններ

Միակ ճանապարհային նշանները համայնքի սահմանները նշող նշաններն են, որոնք տեղադրված են մայրուղու վրա: Տապարիված նյութեր համայնքի մասին առկա չեն:

2.3.5.3 Հեռահաղորդակցություն

Ծակատեն համայնքի տնտեսությունների միայն 70%-ն է ապահովված կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Յասանելի են շարժական հեռախոսակապի Beeline եւ VivaCell օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները: Յամացանցը հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով: Փոստային կապ համայնքում չի գործում Ե: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 2 եւ ռադիոյի 1 ալիքներ: Հեռահաղորդակցության մակարդակը բուն համայնքում կարելի է բավարար համարել:

2.3.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Ծակատեն գործում Է միջնակարգ դպրոց՝ 7 աշակերտներով: Սպորտային դահլիճ եւ խմբակներ չկան: Գործում Է բուժկետ՝ 1 քույրով: Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մերենա: Յամայնքում կանոնավոր աշխատում են գրադարանը եւ մշակույթի տունը, որոնք իրենց նկատելի ներդրումը կարող են ունենալ տուրիզմի զարգացման գործում:

2.3.5.5 Տեսարժան վայրեր

Ծակատեն համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Յարմար Վրանատեղերը եւ ճամբարատեղերը,
- Սուրբ Յոհիվսիմե եկեղեցին,
- Գիլմեշա եւ Իրիգիս բնակավայրերը,
- Բազմաթիվ հին գյուղատեղիները,
- Եկեղեցու Խութը եւ Ջալան,
- Ջալարտ բնակատեղին իր արջերի ձմեռանցով,
- Յանքային ջրի «Թթու ջուր» աղբյուրները:

2.4 ԾԻԿԱՐՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻԶՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՐԱՏՈՒՄ

2.4.1 Ընդհանուր ակնարկ

Ծիկահող ՊԱ այցելուները իրենց ճանապարհորդությունը, որպես կանոն, սկսում են Ծիկահող համայնքից, քանի որ արգելոցի վարչական շենքը նույնպես գտնվում է գյուղում: Սա այն եզակի համայնքներից է, որ ունի ճանապարհային նշաններ, որոնք ցույց են տալիս ուղղությունը դեպի համայնքի պատմական եւ բնության հուշարձանները եւ տեղեկություններ տալիս դրանց մասին: Նշանները տեղադրվել են ԲՀՀ օժանդակության շնորհիվ:

Արգելոցի վարչակազմը տեղեկատվություն է տրամադրում նաեւ գործող «Զանգեզուր» արգելավայրի էկոտուրիզմի հնարավորությունների, ինչպես նաեւ այստեղ գտնվելու կարգի մասին, քանի որ այս արգելավայրի կառավարումը հանձնված է «Ծիկահող» ՊԱ-ին:

«Ծիկահող» ՊԱ դեկավարության համաձայնությամբ այցելուները կարող են նաեւ գիշերել արգելոցի հյուրատանը (առկա են 8 մահճակալներ 2 սենյակներում) ինչպես նաեւ սննդի ծառայություններ ստանալ այստեղ: Յնարավորությունները պայմանավորված են պատմամշակութային

հուշարձանների առկայությամբ՝ ներաջալ նախաքրիստոնեական շրջանի տեսարժան վայրերով, «Ծիկահող» ՊԱ մուտք գործելու ավելի հեշտ հնարավորությամբ, գիշերակացի հնարավորություններով, գյուղի բարենպաստ դիրքով (գտնվում է հիմնական մայրուղու վրա):


Այս ճանապարհը Յայաստանը իրանին կապող երկու մայրուղիներից մեկն է Եւ արձակուրդային սեզոնում Յայաստան եկող իրանցիների օգալի մասն անցնում է Ծիկահող գյուղով: Գյուղում կա օտար լեզու (գերմաներեն) իմացող ընդամենը մեկ հոգի, ով միջնակարգ դպրոցի ուսուցիչներից է: 2010թ. եցստրեմալ դահուկային սպորտի սիրահարներ են այցելել համայնք Եւ ՊԱ աշխատակիցների օգնությամբ հետազոտել են դահուկավարելու հնարավորությունները խուստուփ լեռն լանջին: Թիմը հետաքրքրություն է արտահայտել այստեղի հնարավորություններով Եւ ցանկություն է հայտնել վերադառնալ նաեւ եկոտուրիզմի ամառային հնարավորությունները հետազոտելու նպատակով:



2.4.2 Ուսուլըները

Գյուղում կան մ.թ.ա. II-I հազարամյակների ժամանակաշրջանի 4 դամբարանադաշտեր: Կա նաեւ ուշ միջնադարին պատկանող մի կամուրջ (1856թ.) որը գտնվում է հիմնական առեւտրային մայրուղիների վրա: Ինչպես շատ այլ գյուղեր, Ծիկահողը նոյնպես իր տարածքում ունի մի քանի հին գյուղատեղիներ (4 բնակատեղի Եւ հայտնաբերված): Ծիկահողում կա նաեւ XIII դարում կառուցված մի եկեղեցի՝ Սուրբ Ստեփանոս անունով:

Նկար 6 - Ծիկահողի եկեղեցու մուտքը



Պահպանվել է նաեւ Մովսես Վրբեպիսկոպոս Նուբարյանի գերեզմանը, ով հանդիսանում է Պողոս Նուբար Փաշայի ազգականը Եւ Մելիք Նուբարի թոռը, որը նոյնպես ծննդով Ծիկահողից է Եւ ծառայել Ե Դավիթ Բեկի շոկատում ազգային-ազատագրական շարժման ժամանակ: Այս ազգակցական կապի պատճառով որոշ մասնագետներ կարծում են, որ Պողոս Նուբար Փաշան նոյնպես ծնվել է Ծիկահողում:

Գյուղում կա նաեւ հանքային ջրի փոքր աղբյուր, որը գտնվում է գեղատեսիլ վայրում Եւ նոյնպես կարող է արշավային երթուղու մաս դառնալ: Ծիկահողում կա Կենիների պուրակ, որը բազմազանություն է հաղորդում այստեղի եկոտուրիզմի հնարավորություններին:

Ծիկահողում կարող են զարգանալ եկոտուրիզմի բազմաթիվ տեսակներ, ներառյալ՝ լեռնամագլցումը, վայրի կենդանիների դիտումը եւ արշավները: Ծիկահողում կարող են զարգանալ նաեւ պատմամշակութային տուրիզմը եւ էթնոտուրիզմը, հաշվի առնելով առկա ավանդույթները եւ գործող հյուրատներում բազմատեսակ ավանդական ուտեստների սպասարկումը:

2.4.3 Տեղական կառավարման մարմիններ

Համայնքի դեկանարությունը պատրաստակամ է օժանդակել տուրիզմի զարգացման բոլոր նախաձեռնություններին, սակայն համայնքապետարանի մասնագետները տիրապետում են ոչ-բոլոր անհրաժեշտ ուսակություններին եւ հմտություններին: Չկան տուրիզմի զարգացման մշակված տեսլական եւ այս խնդրի լուծման համար անհրաժեշտ ռեսուրսներ: Համայնքը պատրաստակամ է ներդրում կատարելու իր հնարավորությունների սահմաններում՝ ներառյալ համայնքապետարանի աշխատակազմից որեւէ մեկին հատկապես այս խնդրով ծանրաբեռնելու առումով: Համայնքի անդամները գիտակցում են, որ պետք է օգտվեն տուրիզմի ընձեռած հնարավորություններից, սակայն չունեն կարողություններ դա իրականացնելու համար:

2.4.4 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ

2.4.4.1 Անդի սպասարկում

Այս ծառայությունը համայնքում տրամադրվում են երկու հյուրատներով, որոնք գտնվում են համայնքում եւ նախնական պատվերի դեպքում կարող են հյուրասիրություն պատրաստել: Խոհանոց կա նաեւ ծիկահողի ՊԱ հյուրատանը, որը սպասարկում է այն այցելուներին, ովքեր գիշերում են արգելոցում:

2.4.4.2 Գիշերակաց

Հետազոտությունն իրականացնելիս ԱՄ Փարթևը Շնկերության մասնագետները հյուրընկալվել են Ծիկահող համայնքում գտնվող երկու հյուրատներում («Վրիհիկի» եւ «Գեղամի»): Երկու հյուրատներն ել բավարար պայմաններ ունեն այցելուներ ընդունելու համար: Երկուսն ել ունեն բարյացակամ սեփականատերեր, որոնք փորձում են անել լավագույնը հյուրերին հնարավորինս բարձր մակարդակով սպասարկելու համար: Տներում միջավայրը հաճելի է, այստեղ պատրաստվում են ավանդական շատ ուտեստներ: Սակայն երկու տների ներկայացուցիչներն ել հյուրընկալության թեմայով վարժանքների մասնակցելու կարիք ունեն: Նրանք պետք է սովորեն հաճախորդների սպասարկման միջազգայնորեն ընդունված նվազագույն պահանջները եւ օժանդակություն ստանան տներում որոշ բարեկարգում կատարելու համար, որպեսզի հյուրերը կարողանան առանձին մուտք, սանհանգույց եւ ննջարան ունենալ:

Նկար 7 - Հյուրասիրություն ծիկահողի հյուրատանը



2.4.4.3 Միջոցառումներ Եւ փառատոններ

Զմանը Շիկահողում ամենագնաց մեքենաների մրցույթ է կազմակերպվում (տես մրցույթի վայրը Նկար 8-ում): Այն ռալի է կարճ տարածության վրա, մոտ 50 մետր երկարությամբ, թեք լանջի վրա գտնվող մասում: Յաղթողը ստանում էն դրամական պարգել:

2.4.5 Ենթակառուցվածքներ

2.4.5.1 Ճանապարհներ Եւ տրանսպորտ

Շիկահող համայնքը գտնվում է Կապանից 22 կմ հեռավորության վրա: Յասարակական տրանսպորտը (դեպի Ծավ գնացող) համայնքի եւ Կապանի միջեւ աշխատում է օրական 1-2 անգամ, շաբաթական 5-6 օր: Այս ճանապարհն ասֆալտապատ է եւ գտնվում է շատ լավ վիճակում: Այն անցանելի է կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհները (մոտ 3.5 կմ՝ ասֆալտապատ չեն եւ գտնվում են վատ վիճակում:

Նկար 8 - Մեքենաների մրցույթի վայրը Շիկահողում



2.4.5.2 Ճանապարհային նշաններ

Շիկահողը ճանապարհային նշաններ ունեցող միակ համայնքն է, որոնք ցույց տալիս համայնքի բնության ու պատմական հուշարձանների եւ արգելոցի ուղղությունները: Այս նշանները դրվել են ԲՀՀ կողմից հատկացված օժանդակությամբ:

2.4.5.3 Յեռահաղորդակցություն

Շիկահող համայնքի տնտեսությունների 90%-ն է ապահովված կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Յասանելի են շարժական հեռախոսակապի Beeline եւ հատկապես VivaCell օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները: Յամացանց հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով: Փոստային կապ համայնքում գործում է: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 4 եւ ռադիոյի 2 ալիքներ: Յեռահաղորդակցության մակարդակը բուն համայնքում կարելի է բավարար համարել, սակայն հարակից տարածքներում՝ հատկապես տուրիստական տեսարժան վայրերում հեռահաղորդակցության մակարդակը զգալի բարելավումների կարիք ունի:

2.4.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Շիկահողում գործում է միջնակարգ դպրոց՝ 29 աշակերտներով: Սպորտային դահլիճ եւ խմբակներ չկան: Գործում է բուժկետ՝ 1 քույրով: Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մեքենա: Յամայնքում կանոնավոր աշխատում են գրադարանը եւ մշակույթի տունը, որոնք իրենց նկատելի ներդրումը կարող են ունենալ տուրիզմի զարգացման գործում:

2.4.5.5 Տեսարժան վայրեր

Շիկահող համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- I-II դարերի դամբարանադաշտերը,
- Միջնադարյան կամուրջը,
- 4 հին քնակատեղիներ,
- XIII դարում կառուցված Սուրբ Ստեփանոս եկեղեցին,
- Մովսես Արքապիսկոպոս Նուբարյանի գերեզմանը,
- Յանքային ջրի աղբյուրը,
- Կենիսերի պուրակը,
- Ներքին Յանդ համայնքում գտնվող «Սոսու Պուրակ» արգելավայրը,
- Բնության գեղատեսիլ վայրերը եւ հուշարձանները:

2.5 ԾԱՎ ՀԱՍԱՅՆՁԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

2.5.1 Ընդհանուր ակնարկ

Ծավ համայնքը Ներկայացված է Երկու քնակավայրերով՝ Ծավով եւ Շիշկերտով։ Վերջինս ուսի փոքր քնակչություն, ընդամենը 6 ընտանիք, մինչդեռ համայնքում կան 1988-1990թթ. Խորհրդային Յայաստանի Կառավարության կողմից կառուցված բազմաթիվ անքնակ տներ։ Յամայնքի վարչական տարածքում գտնվում են մի քանի հին քնակատեղիներ՝ իրենց եկեղեցիներով եւ գերեզմաններով։ Եվս երկու միջնադարյան եկեղեցի կա Շիշկերտում։ Տուրիստական հիմնական հնարավորությունն այստեղ արշավն է դեպի Խուստուի լեռ, գյուղի նախընտրելի դիրքի պատճառով (Շիշկերտից Խուստուի 10 կիլոմետր է եւ ճանապարհը մոտենում է 200 մետր մինչեւ լեռան գագաթը)։

Նկար 9 - Միջնադարյան կամուրջ Ծավով (Շիշկերտ)



Տուրիզմի գարգացման հնարավորությունները ներառում են գեղեցիկ ջրվեժը, հանքային ջրի աղբյուրը, դրանց մոտ գտնվող վրանային ճամբարի համար հարմար վայրերը, որոնք արշավի հետ միասին դեպի Խուստուի լեռ կարող են կազմել մեկ երթուղի։ Յնարավոր երթուղու մեջ կարող է ընդգրկվել նաև միջնադարյան կամուրջը, որը ժամանակին հայտնի միջնադարյան առեւտրային երթուղիները կապող օղակ է եղել։ Եւս մեկ հանքային ջրի աղբյուր («Մոսի ջուր») կա դեպի Կեմանց հին գյուղատեղի գնացող մասում՝ անտարի մեջ, որտեղ կան եւս երկու եկեղեցիներ եւ հին գերեզմանատուն։ Ծավը հայտնի է նրանով, որ Կաթողիկոս Աբրահամ III-ը այստեղով է գնացել դեպի Պարսկաստան՝ մասնակցելու Նադիր Ծահի թագաղորությանը։ Աբրահամ III-ը ակնարկներ է գրել Պարսկաստանի պատմություն մասին Նադիր շահի թագավորության ժամանակ, որը հանդիսանում է մեզ հասած Պարսկաստանի պատմության ոչ-պարսկերեն լեզվով գրված եղակի աղբյուրներից մեկը։ Աբրահամը հայտնի է նաև նրանով, որ կարողացել է բարելավել քաղաքական հարաբերությունները Նադիրի հետ, ինչի արդյունքում Նադիրը հայ իշխաններին ազատել է հարկեր վճարելուց։

Գյուղում մեկ հոգի գիտի անգլերեն՝ նա աշխատում է գյուղի միջնակարգ դպրոցում որպես անգլերեն լեզվի ուսուցիչ: Վերջերս այստեղ բացվել է անգլերեն լեզվի խմբակ երեխաների եւ մեծերի համար: Դասերն անց են կացվում ԱՄՆ Խաղաղության Կորպուսի կամավորի կողմից:

2010թ. Ծավու ունեցել է հեծանվորդ այցելուներ, որոնք համայնքապետի մտաբերած միակ այցելուներն են եղել այս համայնքում:

2.5.2 Ոեսուրսներ

Ծավի վարչական տարածքում գտնվում են մի քանի հին բնակատեղիներ, որոնցից ամենահինը, Թարգմանչաց գյուղը, հիմնվել է X դարում: Գյուղի կառույցներից պահպանվել են եկեղեցին եւ գերեզմանատունը: Դին բնակատեղիներից են նաեւ Կեմանցը, Նավսը եւ Մազրան, որում մասամբ պահպանվել է մատուռը: Ծավում կա նաեւ հին կամուրջ, որը եղել է միջնադարյան առեւտրային ճանապարհները կապող օղակներից մեկը:

Համայնքն ունի տաք հանքային ջուր, որը գտնվում է մայրուղուց 1 կիլոմետր հեռավորության վրա: Կա նաեւ գեղեցիկ ջրվեժ, որը հայտնի է Նրանով, որ այստեղ էր հանգստանում Հայաստանի նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Ծավ համայնքի մաս կազմող Շիշկերտ գյուղի մոտ լինելը Խուստուիփ լեռանը լավագույն հնարավորություններ եւ ստեղծում լեռնամագլցման, լեռնային դահուկավարության, վայրի կենդանիների դիտման եւ թռչնադիտումների համար: Լանդշաֆտի բազմազանությունը, անտառային խիտ ծածկույթը եւ աղբյուրների առկայությունը լավ հնարավորություններ են ստեղծում արշավներ, այդ թվում՝ վրանային, կազմակերպելու համար: Էթնոտուրիզմի եւ մշակութային տուրիզմի համար բարենպաստ պայմաններ են ստեղծում հին տների առկայությունը Շիշկերտում, գյուղական ավանդական կենցաղի լավ պահպանված լինելը, ավանդական դարձած Բերդի Տոնը եւ այլն: Պատմական հուշարձանների առկայությունը հնարավորություն եւ ստեղծում պատմամշակութային տուրիզմի զարգացման համար:

2.5.3 Տեղական կառավարման մարմիններ

Ծավ-Շիշկերտ համայնքը ներկայացված է ավելի կազմակերպված եւ փորձառու ղեկավար անձնակազմով: Չնայած դրան՝ այս գյուղը եւս չունի տեսլական ապագայի մասին կամ համայնքի զարգացման նախագիծ մշակելու կարողություններ: Ծավը միակ համայնքն է, որն ունի տպագրված նյութ գյուղի հուշարձանների մասին՝ նկարներով, նկարագրական տեքստով եւ քարտեզով, որը պատրաստվել է Կապանի թանգարանի տնօրենի շանքերով:

2.5.4 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ

2.5.4.1 Սևնդի սպասարկում

Սևնդի սպասարկման ծառայություններ Ծավում չկան:

2.5.4.2 Գիշերակաց

Ծավում եւ ծիշկերտում առայժմ չկան գործող հյուրատներ, սակայն կան բավարար պայմաններ ունեցող բազմաթիվ տներ, որոնք կարող են որպես հյուրատներ ծառայել, եթե դրանց պայմանները որոշակիորեն բարելավվեն: Ծավում եւ ծիշկերտում կան հին տներ, որոնք կարող են ծառայել եւ՝ որպես կացարան, եւ որպես տեսարժան վայրեր, սակայն կրկին անհրաժեշտ է իրականացնել բարեկարգման աշխատանքներ:

Ծիշկերտում կան նաեւ 19 հատ 2-3 հարկանի տներ, որոնք կառուցվել են 1988-1990թթ.: Տներից յուրաքանչյուրը նախատեսված է երկու ընտանիքների համար: Յուրաքանչյուր հարկ ունի 3 սենյակներ, խոհանոց, մեկ սանհանգույց եւ մեկ լոգարան: Բոլոր սենյակները եւ սանհանգույցը վերանորոգման կարիք ունեն, քանի որ երկար ժամանակ չօգտագործվելով դրանք անպիտան են դարձել: Խուստուիփ լեռնան մոտ գտնվելով՝ այս քոթեշները կարող են լեռ այցելողների համար որպես հարմարավետ հյուրատներ ծառայել:

2.5.4.3 Միջոցառումներ եւ փառատոններ

Ամեն աշուն գյուղում կազմակերպվում է բերքի տոն, որին մասնակցում են գյուղացիները, ցուցադրելով բերքի լավագույն նմուշները: Կազմակերպվում է մրցույթ, որի հաղթողները փոքր նվերներ են ստանում: Միջոցառումը կազմակերպվում է World Vision կազմակերպության աջակցությամբ: Այն սակայն գբոսաշրջիկներ գրավող լուրջ միջոցառում դեռևս չի կարող հանդիսանալ:

2.5.5 Ենթակառուցվածքներ

2.5.5.1 Ճանապարհներ եւ տրանսպորտ

Ծավ համայնքը գտնվում է Կապանից 36 կմ հեռավորության վրա: Յասարակական տրանսպորտը համայնքի եւ Կապանի միջեւ աշխատում է օրական 1-2 անգամ, շաբաթական 5-6 օր: Այս ճանապարհն ասֆալտապատ է եւ գտնվում է շատ լավ վիճակում: Այն անցանելի է կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն: Դրանց մեջ մասը (մոտ 5 կմ ընդհանուր 6-ից) գտնվում են վատ վիճակում:

2.5.5.2 Ճանապարհային նշաններ

Յամայնքում ճանապարհային նշաններ տեղադրված չեն՝ բացառությամբ մայրուղու վրա տեղադրված գյուղը անունը կրող նշանների:

2.5.5.3 Յեռահաղորդակցություն

Ծավ համայնքի տնտեսությունների ընդամենը 60%-ն է ապահովված կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Յասանելի են շարժական հեռախոսակապի Beeline եւ հատկապես VivaCell օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները: Յամացանցը հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով: Փոստային կապ համայնքում գործում է: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 3 եւ ռադիոյի 1 ալիքներ: Յեռահաղորդակցության մակարդակը բուն համայնքում կարելի է մասնակի բավարար համարել, սակայն հարակից

տարածքներում՝ հատկապես տուրիստական տեսարժան վայրերում հեռահաղորդակցության մակարդակը զգալի բարելավումների կարիք ունի:

2.5.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Ծավում գործում է Ենթաշրջանի ամենամեծ միջնակարգ դպրոց՝ 50 աշակերտներով: Սպորտային դահլիճ եւ խմբակներ չկան: Գործում է բուժկետ՝ 2 քույրերով: Համայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մեքենա: Կանոնավոր աշխատում են գրադարանը եւ մշակույթի տունը, որոնք իրենց նկատելի ներդրումը կարող են ունենալ տուրիզմի զարգացման գործում:

2.5.5.5 Տեսարժան վայրեր

Ծավ համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Յին բնակատեղիներ՝ Եկեղեցիների եւ գերեզմանների ավերակներով,
- Կեմանց հին բնակատեղին, Եկեղեցիները եւ «Ջոսի ջուր» հանքային ջրի աղբյուրը,
- Միջնադարյան Եկեղեցի Շիշկերտում,
- Խուստուի լեռը (Շիշկերտից Խուստուի 10 կիլոմետր է եւ ճանապարհը մոտենում է 200 մետր մինչեւ լեռան գագաթը):
- Չրվեժը եւ հանքային ջրի աղբյուրը,
- Վրանային եւ ճամբարային հարմարավետ վայրերը,
- Միջնադարյան կամուրջը Շիշկերտում,
- «Սոսիների Պուրակ» արգելավայրը Ներքին Յանդ գյուղում,
- Գեղատեսիլ բնության հուշարձանները եւ անտառները:


2.6 ԼԵՌՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՐԱՏՈՒՄ

2.6.1 Ընդհանուր ակնարկ

Լեռնաձոր համայնքը տուրիզմի զարգացման եզակի ռեսուրսներ եւ բարենպաստ դիրք ունի, քանի որ այն գտնվում է Յայաստանը Իրանի հետ կապող հիմնական մայրուղու վրա: Չնայած դրան՝ տուրիզմի զարգացումն այստեղ վտանգված է ուրանի հանքի բացման եւ շահագործման հնարավորությամբ: Չնարավորությունները ներառում են այցելություններ դեպի ազգային-ազատագրական շարժման հուշարձաններ հանդիսացող պատմական ամրոցներ, որոնք ներկայացնում են Յայաստանի եւ Պարսկաստանի միջեւ հարաբերությունները սկսած վաղ միջնադարից:

Լեռնաձորում է գտնվում Նաեւ Սյունիքի հին մայրաքաղաքի ամրոցի ավերակը: Համայնքի տուրիզմի զարգացման հնարավորությունները

Նկար 10 - Բաղաբերդի ամրոցը



Լոշորեն ուժեղանում են Լեռնաձորի միջնակարգ դպրոցում գտնվող թանգարանով եւ նաեւ հենց դպրոցով: Վերջինս ունի յուրօրինակ միջավայր եւ այստեղ կիրառվում են դասավանդման հետաքրքիր մեթոդներ: Դպրոցի տևորենը բարձր իստելեկտի տեր է եւ դասավանդման տարրեր մեթոդների. Սյունիքի եւ Լեռնաձորի մասին հարյուրավոր հոդվածների հեղինակ է հանդիսանում: Թանգարանը նյութեր ունի նաեւ պարսկական «Շահնամե» Եպոսի թարգմանիչ Սերգեյ Ումարյանի մասին:

Գյուղում կան անգլերեն լեզվին տիրապետող մի քանի երիտասարդներ, ովքեր ապրում են Լեռնաձորում եւ աշխատում քաջարանում: Ըսդհանուր առմամբ, Լեռնաձորը գտնվում է համեմատաբար ավելի լավ սոցիալական վիճակում, քանի որ գտնվում է Քաջարանից ընդամենը 3 կիլոմետր հեռավորության վրա, որտեղ գործող պղնձամոլիրդենային կոմբինատը հարավային Սյունիքի ամենամեծ գործատուն է հանդիսանում:

Ինչպես արդեն նշվեց, տուրիզմի զարգացման հիմնական վտանգը պայմանավորված է ուրանի հանքի բացման եւ շահագործման հեռանկարներով:

2.6.2 Ռեսուրսները

Լեռնաձորի կարեւոր տուրիստական ռեսուրսներից է Բաղաբերդ ամրոցը, որը հիմնվել է IV դարում Բաղակ իշխանի կողմից, որտեղ պարսից թագավոր Շապուհը պարտություն է կրել Բաղակից: Կա եւս մեկ ամրոց, Կապանը, որից ավերակներ են մնացել, եւ որը եղել է Սյունիքի մայրաքաղաքը X-XI-րդ դարերում: Յին Կապանի բնակավայրը դժվար անցանելի վայրում է գտնվում: Կա հին բնակատեղի, որը կոչվում է Ջրդիկանց, որը կարծում են, որ հիմնվել է Զուրող թագավորի կողմից, ով համարվում է Սյունյաց ազնվական տոհմի վերջին թագավորը: Բնակատեղին գտնվում է Լեռնաձորից ընդամենը 1 կմ հեռավորության վրա: Այն ունի եկեղեցի, հին տներից մնացած որոշ ավերակներ եւ գերեզմանատուն: Զեւու բերդը նույնաբես հանդիսանում է Լեռնաձորի տուրիստական կարեւոր ռեսուրսներից մեկը, քանի որ կապած է Դավիթ Բեկի կողմից կազմակերպված ազգային-ազատագրական շարժման հետ:



Յամայնքի դպրոցն իր թանգարանով (որտեղ ցուցադրված են հարյուրավոր նմուշներ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը) եւ հետաքրքիր արխիվով (որը վերաբերվում է Սյունիքի եւ Լեռնաձորի պատմությանը) հետաքրքիր վայր է հանդիսանում այցելությունների համար: Դպրոցի սրահները եւ դասարանները գեղեցիկ հարդարված են, լի հետաքրքրաշարժ եւ կատակներով համեմված ուղեցույցներով՝ ստեղծելով թեթեւ, բայց տեղեկատվությամբ հագեցված միջավայր եւ

խթանելով ուսուցման արդյունավետ ընթացքը: Աշակերտներին այստեղ սովորեցնում են լինել ինքնուրույն եւ պատասխանատու: Օրինակ՝ դպրոցի ճաշարանում չկա մշտապես աշխատող աշխատակազմ, քանի որ աշակերտները իրենք են պատրաստում եւ սպասարկում ուտելիքը եւ իրենք ել հավաքում սրահը:

Աշակերտները դպրոցից սարքավորումները եւ նյութերը տանում են տուն եւ առանց փչացնելու կամ կորցնելու վերադարձնում: Դպրոցի տնօրենը շատ լավ տեղեկացված է Լեռնաձորի պատմամշակութային եւ բնության հուշարձանների մասին եւ մեծ սիրով կիսում է իր գիտելիքները այցելուների հետ: Նա կարեւոր ռեսուրս է հանդիսանում արշավների համար երթուղիների եւ գովազդային նյութեր մշակելու համար:

Գյուղի հետ կապված է մի հետաքրքիր լեգենդ, որի մասին պատմում է Ղետոնդ Ալիշանը ասելով, որ Բաղաբերդում է աճում հիասքանչ նուևուֆարը: Գիտնականները մինչ այժմ չեն կարողացել գտնել այդ ծաղիկը, ինչը այցելուների համար կարող է ինտրիգ դառնալ՝ դրույվ նրանց այցելել Բաղաբերդը եւ փորձել գտնել նուևուֆարը:

Լեռնաձորը հայտնի է նաեւ նրանով, որ ժամանակին այստեղ այցելել է Մեսրոպ Մաշտոցը: Յետաքրքիր է այն, որ Մաշտոցը անցել է հենց նույն վայրով, որտեղ կառուցվել է Լեռնաձորի դպրոցը, որի մասին վկայություն կա դպրոցի պատի փակցված հուշատախտակի վրա:

Լեռնաձորում հարուստ պատմամշակութային հուշարձանների, թանգարանի եւ տեղեկատվության առկայությունը հիմնալի հնարավորություններ են ստեղծում պատմամշակութային տուրիզմի զարգացման համար: Ազանդական մոտեցումների եւ ժամանակակից մեթոդների համադրությամբ կրթության կազմակերպումը գյուղի միջնակարգ դպրոցում գրեթե եղակի է եւ հնարավորություններ է ստեղծում նաեւ եթևոտուրիզմի զարգացման համար: Լեռնաձորի լանդշաֆտի կտրտվածությունը, բարձր ժայռերը եւ խոր ձորերը հնարավորություններ են ստեղծում նաեւ եքստրեմալ տուրիզմի զարգացման համար:

2.6.3 Տեղական կառավարման մարմիններ

Լեռնաձոր համայնքի ղեկավարությունը շատ փորձառու է եւ պատրաստված: Յամայնքապետարանը պատրաստակամ է օժանդակել տուրիզմի զարգացմանը Լեռնաձորում, քանի որ այն կարեւոր գործոն եւ գործիք է համայնքի եւ ողջ Սյունիքի տնտեսական վիճակը բարելավելու համար:

2.6.4 Տուրիստական Ծառայություններ եւ Միջոցառումներ

2.6.4.1 Անսղի սպասարկում

Գյուղում կա ռեստորան՝ մինչեւ 250 հոգի նստատեղերով: Ռեստորանը մաքուր է, բայց սպասարկման մակարդակը՝ ցածր է: Այստեղ կարելի է համտեսել նույն պարզ ճաշատեսակները, ինչ ամենուրեք՝ խորովածներ եւ քաբար:

2.6.4.2 Գիշերակաց

Յամաձայն գյուղապետի տրված տեղեկության, Լեռնաձորում կան բազմաթիվ տներ, որոնք ունեն բարվոք վիճակի ննջարաններ եւ սանհանգույցներ: Սակայն, քանի որ այս տներում նախկինում գրոսաշոշիկներ չեն եղել եւ ծառայության որակը հայտնի չէ, դրանք պետք է ևս այցելեն մասնագետները՝ հասկանալու համար տանտերերի ընդհանուր վերաբերմունքը հյուրերին սպասարկելու նկատմամբ, իմտությունների մակարդակը եւ բարեկարգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտության պարագայում սեփական ներդրումներ իրականացնելու նրանց պատրաստակամությունը:

2.6.4.3 Միջոցառումներ եւ փառատոններ

Չեն կազմակերպվում:

2.6.5 Ենթակառուցվածքներ

2.6.5.1 Ծանապարհներ եւ տրանսպորտ

Լեռնաձոր համայնքը գտնվում է Կապանից 24 կմ հեռավորության վրա: Յասարակական տրանսպորտը համայնքի եւ Կապանի միջեւ աշխատում է օրական 11 անգամ, շաբաթական 7 օր: Այս ճանապարհն ասֆալտապատ է եւ գտնվում է շատ լավ վիճակում: Այս ճանապարհն անանցանելի է դառնում տարեկան առավելագույնը մի քանի օր: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն, սակայն գտնվում են նորմալ վիճակում:

2.6.5.2 Ճանապարհային նշաններ

Ճանապարհային նշաններից առկա են միայն համայնքի անունը կրող նշանները: Դպրոցի պատին կա հուշատախտակ, որը մոտավոր ցույց է տալիս Մեսրոպ Մաշտոցի ուղեւորության երթուղին:

2.6.5.3 Հեռահաղորդակցություն

Լեռնաձոր համայնքն ամբողջովին ապահովված է կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Յասանելի են շարժական հեռախոսակապի բոլոր օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները: Յամացանցը հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով: Փոստային 3 բաժանմունքներ են գործում համայնքում: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 5 ալիքներ: Հեռահաղորդակցության մակարդակը բուև համայնքում կարելի է բավարար համարել:

2.6.5.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Լեռնաձորի գյուղերում գործում են 2 հատ 9-ամյա (90 աշակերտ) եւ 2 հատ 11-ամյա միջնակարգ (127 աշակերտ) դպրոցներ: 24 երեխաներ մանկապարտեզ են հաճախում: Յամայնքում գործում են բասկետբոլի եւ շախմատի խմբակներ, բայց մարզադահլիճներ չկան: Գործում են բուժկետներ՝ 1-ական քույրերով: Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մեջենա: Կանոնավոր աշխատում են գրադարանը եւ մշակույթի տունը, որոնք իրենց նկատելի ներդրումը կարող են ունենալ տուրիզմի զարգացման գործում:

2.6.5.5 Տեսարժան վայրեր

Լեռնածոր համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Սյունիքի X-XI-րդ դարերի հին մայրաքաղաքի ավերակները,
- Լեռնածորի միջնակարգ դպրոցը Եւ այստեղ գտնվող թանգարանը,
- Բաղաբերդի ամրոցը,
- Ջրդիկանց բնակատեղին իր եկեղեցով Եւ գերեզմաններով,
- Չեւու բերդը,
- Նուևուֆարի վերաբերյալ լեգենդի վայրը:

2.7 ՎԱՐԴԱՌԵՋՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻԶՄԻ ՏԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.7.1 Ըստիանուր ակնարկ Եւ ռեսուրսներ

Վարդանիծոր համայնքում եւս տուրիզմի զարգացման հիմնական վտանգը ոսկու կորզման արտադրամասի գործունելությունն է: Նախկինում այստեղ աշխատել է ոսկու հանք, որը հետո փակվել է, սակայն ակնկալվում է, որ շուտով նորից բացվելու է: Ջյուրատների համար հիմնական մարտահրավեր է հանդիսանում այն, որ գյուղում չկա տեղական ավանդույթների վրա հիմված միջավայր: Ջամայնքը ներկայացնող գյուղերից շատերը բնակեցված են փախստականներով Եւ նրանց տները ժամանակին կառուցվել են Աղրբեջանցիների կողմից: Խնդիր է հանդիսանում նաեւ այն, որ գյուղերից երկուսում, Վանքում եւ Կալերում չկա մշտական ապրող բնակչություն:

Լրացուցիչ խնդիր է հանդիսանում այն, որ Վարդանիծոր գյուղում չկա խմելու ջրի բարվոք ցանց. այն հիմա կառուցվում է Եւ ակնկալվում է, որ շինարարությունը կավարտվի 2011թ.: Թխկուտ գյուղում նոյն աշխատանքը կասկվի 2012թ., իսկ Վանքում Եւ Կալերում՝ առայժմ հայտնի չէ, թե երբ կասկվի: Ջյուրընկալության հնարավորությունները ներկայացված են Այգեծոր գյուղում գտնվող փոքր հյուրանոցով, երկու ռեստորաններով (Այգեծորում Եւ Վարդանիծորում): Ջնարավորությունները նաեւ ներկայացված են Եգակի պատմամշակութային հուշարձաններով. ինչ գերեզմանատնով, որտեղ քարերի վրա գրված տեքստը արաբատառ է (ինչը հատկապես հետաքրքիր կարող է լինել իրանցի այցելուների համար) Եւ Վարդանիծորից 2 կմ հեռավորության վրա գտնվող Կուսանաց անապատը, որը տարբերվում է հայտնի կուսանոցներից նրանով, որ այստեղ ապրում եւ ծառայում էին տղամարդ հավատացյալները:

Վարդանիծորը յուրահատուկ է նրանով, որ գյուղը ներկայացնող համայնքները բնակեցված են Աղրբեջանի տարբեր մասերից գաղթած փախստականներով Եւ բնակիչների կենցաղի ուսումնասիրությունը կարող է հետաքրքիր դառնալ աղրբեջանաբնակ հայերի ավանդույթների ուսումնասիրության համար: Գյուղում առկա արաբատառ հուշարձանի եւ Կուսանաց անապատի առկայությունը հնարավորություն են ստեղծում պատմամշակութային տուրիզմի զարգացման համար: Ջարուստ լանդշաֆտի առկայությունը հնարավորություն է տալիս նաեւ արշավների Եւ լեռնահեծանվային տուրիզմի կազմակերպման համար:

2.7.2 Տեղական կառավարման մարմիններ

Վարդանիձոր համայնքի ղեկավարը եւ աշխատակազմը նույնպես լրջորեն շահագրգռված են տուրիզմի զարգացման մեջ, սակայն չունեն այն ծրագրերու եւ ծրագրերը կյանքի կոչելու գիտելիքներ եւ հմտություններ: Ազնիայտ է նաեւ, որ հանքի վերաբացումը տեղական մարմինների եւ ազգաքնակչության համար աշխատատեղ ունենալու առավել իրատեսական հնարավորություն է համարվում: Այդ պատճառով, ինչպես եւ բազմաթիվ այլ համայնքներում, սոցիալական խնդիրները ստիպում են գյուղացիներին մտածել կարճաժամկետ օգուտ ստանալու ուղղությամբ, որն անմիջապես առաջարկում է լեռնահանքային արդյունաբերությունը:

2.7.3 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ

2.7.3.1 Անդի սպասարկում

Սևնդի սպասարկումն այս համայնքում տրամադրվում է երկու ռեստորաններով, որոնք գտնվում են Վարդանիձոր եւ Այգեձոր գյուղերում: Այգեձոր գյուղում գտնվող ռեստորանը կարող է հյուրընկալել մինչեւ 200 հոգի: Երկու ռեստորանների աշխատակազմն էլ վերապատրաստման, սպասարկման ու սևնդի անվտանգության միջազգային ստանդարտների մասին տեղեկանալու, ինչպես նաեւ օտար լեզվի հմտություններ ձեռք բերելու կարիք ունի, ինչը հնարավորություն կտա սպասարկել գրոսաշրջիկներին:

2.7.3.2 Գիշերակաց

Գիշերակացի հնարավորությունները ներկայացված են Այգեձոր գյուղում գտնվող փոքր հյուրանոցով, որը կարող է սպասարկել մինչեւ 15 հյուրերի՝ 5 սենյակներում: Յյուրանոցն արդեն օտարերկրյա հյուրեր ընդունելու փորձ է ունեցել 2010 թ.:

2.7.3.3 Միջոցառումներ եւ փառատոններ

Չեն կազմակերպվում

2.7.4 Ենթակառուցվածքներ

2.7.4.1 Ծանապարհներ եւ տրանսպորտ

Վարդանիձոր համայնքը գտնվում է Կապանից 64 կմ հեռավորության վրա: Հասարակական տրանսպորտը համայնքի եւ Կապանի միջեւ աշխատում է օրական 2 անգամ, շաբաթական 7 օր: Այս ճանապարհն ասֆալտապատ է եւ գտնվում է շատ լավ վիճակում: Այն անանցանելի է դառնում տարեկան առավելագույնը մի քանի օր: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն, սակայն հիմնականում գտնվում են նորմալ վիճակում:

2.7.4.2 Ծանապարհային նշաններ

Առկա են միայն գյուղերի անուններով ճանապարհային նշանները:

2.7.4.3 Հեռահաղորդակցություն

Վարդանիձոր համայնքում քիչ թվով տնտեսություններ են ապահովված է կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Յասանելի են շարժական հեռախոսակապի բոլոր օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները: Յամացանցը հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով: Փոստային ծառայություններ համայնքը չունի: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 2 ալիքներ: Հեռահաղորդակցության մակարդակը բուն համայնքում կարելի է մասնակի բավարար համարել:

2.7.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Վարդանիձորում գործում է միջնակարգ դպրոց՝ 30 աշակերտներով: Սպորտային խմբակներ եւ մարզադահլիճներ չկան: Գործում է բուժկետ՝ 1 քույրով: Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մերեսա: Կանոնավոր աշխատում են 2 գրադարանները եւ մշակույթի տունը, որոնք իրենց նկատելի ներդրումը կարող են ունենալ տուրիզմի զարգացման գործում:

2.7.4.5 Տեսարժան վայրեր

Վարդանիձոր համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Յին գերեզմանատունը,
- Կուսանաց անապատը,
- Յին գյուղատեղիները կիսավեր տներով եւ գերեզմաններով:

3 ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՈՂ «ՉԱՆԳԵԶՈՒՐ» ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԽՈՒՍՈՒՓ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԻ ՄԱՍԻՆ

3.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ

Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերում էկոտուրիզմի զարգացման հիմնական խոչընդոտը զարգացող լեռնահանքային արդյունաբերությունն է եւ դրա կողմից թափոնների՝ ներառյալ պոչամբարների անբավարար կառավարումը, ինչը մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին եւ վտանգում էկոտուրիզմի զարգացման հեռանկարները: Տոքսիկ թափոնների խառնուրդ հանդիսացող պոչամբարները կառուցվել են քաջարանի եւ Կապանի լեռնահանքային արդյունաբերական գործարանների կողմից, տեսանելի են աչքով այցելուների համար, զարշելի քիմիական հոտ եւ արձակում շոգ եղանակի ժամանակ, աղտոտում են օդը, գետերը, ստորգետնյա ջրերը եւ հողը: Քանի որ գյուղացիները օգտագործում են գետերի աղտոտված ջուրը ոռոգման նպատակով, նրանք ի վիճակի չեն էկոլոգիապես մաքուր արտադրանք տալ, ինչը կարեւոր խոչընդոտ է բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության համար:

Լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ (68% աճ⁵ 2010թ.) թափոնների քանակը նույնականացնելու մեջացել է՝ ավելացնելով շրջակա միջավայրի վրա թողած բացասական ազդեցությունը: Խոշոր գործարանների հետ մեկտեղ («Deno Gold Mining» ընկերությունը, «Չանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատը»), որոնք արդյունահանում են պղինձ, մոլիբդեն, ոսկի, ցինկ եւ պոլիմետաղներ, այստեղ գործում են նաև մի քանի փոքր ձեռնարկություններ: Մեկ այլ ձեռնարկություն էլ տեղակայված է Վարդանիձորում, որը վերաբացվելուց հետո ոսկի է արդյունահանելու: Ապագայում սպասվում է նոր խոշոր հանքի բաց շահագործում Կապանի Շահումյան հանքավայրում: Ներկայումս լայնորեն քննարկվում են ապագայում ծրագրավորվող ուրանի եւ ոսկու հանքերը Լեռնաձոր համայնքում:

Լեռնահանքային արդյունաբերությունը կարեւոր տնտեսական դեր է խաղում մարզում, քանի որ այն խոշոր գործատու եւ հարկատու է հանդիսանում՝ մինչդեռ տուրիզմը կարող է աշխատանքեր բացել դեռեւս ոչ մոտ ապագայում, երբ միջոցներ կներդրվեն ենթակառուցվածքները, հասարակական ծառայությունները բարելավելու եւ տուրիստական ծառայություններն առաջնային նպատակով: Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի մոտ գտնվող լեռնահանքային արդյունաբերության ընդհանուր շրջանառությունը կազմում է մոտ 300 միլիոն ԱՄՆ դոլար, որից 41 միլիոնը վճարվում է հարկերի տեսքով, իսկ 24 միլիոնը՝ որպես աշխատավարձ⁶: Բացի այդ, զգալի թվով մարդիկ են աշխատում նաև հարակից ոլորտներում, իսկ Կապանի եւ քաջարանի համայնքները գույքահարկ են ստանում գործարանների կողմից զբաղեցրած ընդարձակ տարածքներից եւ կառուցներից: Սակայն լեռնահանքային արդյունաբերության կողմից կատարվող ներդրումներն անշրջելի վնաս են հասցնում շրջակա միջավայրին, հասարակությանը եւ մարդկանց առողջությանը՝ պատճառելով անչափելի վնասներ, եւ խոչընդոտում են այլ ոլորտների զարգացման հնարավորությունները:

Ի տարբերություն դրա՝ տուրիզմի մեջ կատարվող ներդրումները (օրինակ՝ առնվազն մեկ միլիոն ԱՄՆ դոլար միայն մեկ հյուրանոց կառուցելու համար) ստեղծում են հյուրանոցներ, ռեստորաններ, բարելավում են ենթակառուցվածքները եւ հզրությունները: Չարգանում են ծառայություններ մատուցող այլ հարակից ոլորտներ՝ ֆինանսական հատվածը, հեռահաղորդակցությունը, տրանսպորտը եւ այլն: Բացի այդ, տուրիզմի կողմից բնությանը պատճառվող հնարավոր վնասը

⁵ Աղբյուր՝ Սյունիքի մարզական գնահատական

⁶ Ոչ պաշտոնական գնահատական

ավելի հեշտ է չափել Եւ վերականգնել: Ֆինանսական տեսակետից 15 միլիոն ԱՄՆ դոլարի եկամուտ ապահովելու համար, որը գործարանների կողմից վճարվող աշխատավարձերի կեսից ավել է, Սյունիքը պետք է ներգրավի ընդամենը 30,000-ով ավելի գրոսաշրջիկ (հաշվի առևելով, որ մեկ գրոսաշրջիկը ծախսում է միշինում նվազագույնը 500 ԱՄՆ դոլար մեկ այցելության ժամանակ), որոնք այսօր են անցնում Են Սյունիքով՝ հրանից Հայաստան ուղեւորության ժամանակ, սակայն չեն հանգրվանում սպասարկման Ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

Հաշվի առևելով այս մոտավոր նախնական հաշվարկի արդյունքները եւ լեռնահասքային արդյունաբերության կարեւոր սոցիալ-տնտեսական նշանակությունը, դրա ընդլայնմանը դեմ եւ տուրիզմի զարգացմանը կողմ ուղղված առաջարկությունները պետք է ունենան լուրջ տնտեսական հիմնավորում իրագործելիության եւ եկամտաբերության հետազոտության միջոցով: Սա պահանջում է տուրիզմի շահառուների մորթիզացում եւ նրանց կարողությունների զարգացման օժանդակություն, որպեսզի նրանք կարողանան իրականացնել համապատասխան տվյալների հավաքագրում եւ վերլուծություն, առաջարկություններ մշակեն եւ կարողանան լորինգ հրականացնել փոփոխությունների համար:

Գյուղացիների սոցիալ-տնտեսական ծանր վիճակը եւ այլընտրանքային Էներգիայի աղբյուրների բացակայությունը (ներառյալ նաեւ բնական գազի Ենթակառուցվածքների) լուրջ մարտահրավեր է, որը ստիպում է բնակչությանը եքստենսիվ կերպով օգտագործել բնական ռեսուրսները՝ հիմնականում ջեռուցման կարիքները բավարարելու նպատակով: Քանի դեռ անտառային ռեսուրսներն օգտագործվում են գյուղացիների կողմից հանապազորյա կարիքները բավարարելու համար եւ այլընտրանքներ չեն առաջարկվում, հակառակ ուղղությամբ հորդորները որեւէ արդյունք չեն տալու:

Պատմամշակութային եւ բնական ռեսուրսների մասին տվյալները համակարգված եւ տպագրված չեն (օրինակ բուշյուրի տեսքով, որտեղ կարող էին լինել հուշարձանների նկարները, բացատրություններ, երթուղիներ եւ քարտեզներ), ինչը կարող էր օգտագործվել տուրիստական գործակալությունների կողմից իրենց ծառայությունների ձեւավորման համար:

Կապանից եւ Քաջարանից դուրս տուրիստական Ենթակառուցվածքների բացակայությունը կամ դրանց մասին հասարակության անտեղյակությունը մեկ այլ լուրջ խնդիր է: Իրականում, 17 համայնքների տուրիստական սպասարկման Ենթակառուցվածքները ներկայացված են ընդամենը 4 ռեստորաններով եւ մեկ փոքր հյուրանոցով: **Ծառայությունների որակը ցածր է, իսկ շենքերի հարդարումը՝ այցելուների համար ոչ գրավիչ:** Յիմնական խոչընդոտներից է նաեւ հմտությունների պակասը, որը հնարավորություն չի տալիս տեղական բնակչությանը լրացնելու եկամուտ վաստակել: **Աղքի կույտերը ծիկահողի եւ Գեղանուշի ճանապարհին ել ավելի են վատթարացնում իրավիճակը, քանի որ ստեղծում են տիաճ տեսարաններ եւ աղտոտում շրջակա միջավայրը:**

Որսագողությունը շարունակում է մեալ ամենասուր խնդիրներից մեկը: Կապանի ռեստորաններից շատերը ճաշատեսակներ են պատրաստում վայրի կենդանիների մաից՝ ներառյալ վայրի այծի եւ այծյամի, որոնք ընդգրկված են պաշտպանվող կենդանիների ցանկում: Փոքր, բայց կարեւոր խնդիր է նաեւ այն, որ գյուղերում քիչ ծիեր են մնացել եւ կարող են պարզապես հասանելի չլինել, եթե այցելուներին սպասարկելու համար պետք լինեն:

3.2 ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐ

Երեւանից Կապան ճանապարհի երկարությունը մոտ 305 կիլոմետր է, ոլորապտույտ, եւ 5-6 ժամ է պահանջվում է այս անցնելու համար: Դա նշանակում է, որ ճանապարհի որակը պետք է լավը լինի, որպեսզի ճանապարհորդությունը հարմարավետ դառնա: Առաջմ ճանապարհն այդքան էլ լավը չէ, վերանորոգման կարիք կա մի շարք հատվածներում՝ հատկապես Գորիսի-Կապան հատվածում: Ճանապարհն անցնում է բարձրադիր գոտիներով, որոնք պարբերաբար անհասանելի են դառնում ձմեռային սեզոնի ժամանակ: Այս ճանապարհի բարելավման և ախագիծը ընդգրկված է հյուսիսական մայրուղու բարելավման ծրագրում, որով նախատեսվում է խոշոր ներդրումներ կատարել ճանապարհների վերանորոգման եւ նոր ճանապարհների, կամուրջների ու թունելների կառուցման համար: Այս կառույցները զգալիորեն կվարճացնեն ճանապարհը եւ կբարձրացնեն դրա որակը: Թե՛ւ այս ծրագիրն արդեն սկսվել է Յայաստանի հյուսիսում, դեռ պարզ չէ, թե երբ է այս հասնելու Սյունիքի մարզ: Ճանապարհի վերանորոգման խնդիր կա նաեւ Գեղանուշից դեպի Խուստուիք եւ Շիշկերտից դեպի Խուստուիք անցնող մասերում:

Արշավային երթուղիները մշակված չեն. տեղեկություններ չկան ուղղությունների, հեռավորությունների, ճանապարհային նշանների վերաբերյալ, քարտեզներ չկան: Պարզ չէ, թե որտեղից կարելի է ուղեկցողներ գտնել: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է սկսել նման տեղեկություններ ունեցող մարդկանց հայտնաբերումից եւ ներգրավումից:

Կապանում կա փոքր, չգործող օդանավակայան, որի վերաբացումը տեսականորեն կարող է նպաստել այցելուների քանակի ավելացմանը, սակայն նման ծրագիրը համեմատաբար խոշոր ներդրումներ իրականացնելու կարիք կառաջացնի: Այդ պատճառով՝ ցանկալի կիևսեր իրացվելիության հետազոտություն իրականացնել պատկերացնելու համար ինարավոր բոլոր օգուտները՝ ներառյալ նաեւ այլ ոլորտների՝ պաշտպանության, տեղական բնակչության համար հասանելիության բարելավման համար:

Հեռահաղորդակցության ծառայությունները հիմնականում հասանելի չեն գյուղերից եւ մայրուղիներից որուս հատվածներում, ինչպես նաեւ մայրուղու որոշ մասերում: Գյուղերում Օրանժ եւ Վրմենթել օպերատորների կապը շատ թույլ է գործում՝ հիմնականում հասանելի չել:

3.3 ԶԲՈՍԱՎԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արշավային ուղեկցողների ծառայությունը ԲՀՊՏ-ներում կարող են մատուցվել այս գյուղերի բնակչիների կողմից, որոնք գիտեն տեղանքը եւ կարող են օգնել պատմամշակութային հուշարձանների, աղբյուրների եւ կածանների քարտեզների պատրաստման հարցում: Այս ուղեկցողներին կարելի է գտնել գյուղական վարչակազմի միջոցով: Ուղեկցողները պետք է վերապատրաստվեն հաղորդակցման եւ առաջին օգնության հմտությունները բարելավելու համար: Տուրիստական խմբերին պետք է ուղեկցեն թարգմանիչներ, քանի որ գյուղացիները օտար լեզուների չեն տիրապետում եւ պարզ չեն, թե այս խնդիրը մոտ ապագայում ինարավոր կիևսի հաղթահարել, թե՝ ոչ: Օտար լեզուների գյուղերում տիրապետում են միայն միջնակարգ դպրոցների որոշ ուսուցիչներ, որոնք սակայն միանշանակ չեն, որ կներգրավեն եկոտուրիզմի այնպիսի ծառայություններում, ինչպիսիք են արշավները, վրանային ճամբարները, սարեր բարձրանալը եւ այլն:

Նոր ձեւավորված «Զանգեզուր» արգելավայրն ունի մշտական աշխատողներ, որոնք նույնական կարող են ուղեկցել տուրիստական խմբերին: Սակայն պետք է հաշվի առնել նաեւ աշխատանքային պայմանագրի պահանջները եւ այս մարդկանց ընթացիկ պարտականություններն ու

Ժանրաբեռնվածությունը: Նրանք կարող են ոչ միշտ հասանելի լինել այցելուներին սպասարկելու համար: Բացի այդ՝ տուրիստական գործակալությունները կարող են գերադասել ներգրավել իրենց զբոսավարներին:

3.4 ԳԻԾԵՐԱԿԱՑ

Խորհրդատվական թիմի մասնագետները սույն հետազոտության իրականացման ժամանակ գիշերել են գյուղական տներում եւ գոյն են մնացել տրամադրված ծառայությունների որակից: Յյուրատների տերերն ունեցել են սպասարկելու հմտություններ եւ ցանկություն, կարողացել են պատրաստել համեղ ավանդական ուտեստներ, ինչպես որ դա պահանջել էին խորհրդատուները: Ընդհանուր առմամբ՝ գործող «Զանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերում կան բազմաթիվ տներ, որոնք ունեն հյուրեր ընդունելու համար բավարար պայմաններ: Եվս մի փոքր հյուրանոց կա Այգեձոր համայնքում, որն ունի 5 սենյակ եւ գիշերակացի հևարավորություն է տրամադրում մատչելի գներով: Յյուրանոցի անձնակազմը վերապատրաստման կարիք ունի հաճախորդների սպասարկման հմտությունները բարելավելու համար:

3.5 ՍՍՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

3.5.1 Հասարակական սննդի կետեր

Սննդի սպասարկումը ներկայացված է ճակատեն, Լեռնաձոր, Վարդանիձոր եւ Այգեձոր գյուղերի մի քանի ռեստորաններով եւ սրճարաններով: Բոլոր ռեստորանները սպասարկում են հիմնականում տեղացի հաճախորդներին եւ տրամադրում են պարզ ճաշատեսակներ, ներառյալ՝ խոզի եւ հավի խորոված, քարաք ու նմանատիպ այլ ճաշատեսակներ: Չարմանալի է, բայց փաստ, որ իրանից Յայաստան ուղեւորվող բազմահազար այցելուներից շատ քէրն են օգտվում այս ռեստորանների ծառայություններից: Պատճառը ռեստորանների տերերին անհայտ է, մինչդեռ այն պետք է լինի նշանակած երից մի քանիսը կամ բոլորը. ռեստորանները չեն սպասարկում այն սնունդը, որը իրանցիները կցանկանային ճաշակել, ռեստորանների հարդարանքը գրավիչ չէ, կամ ծառայության որակը բավարար չէ:

3.5.2 Էթնիկ ճաշատեսակներ

Առանձին համայնքների վերլուծության մեջ անդրադարձ չի կատարվել հետազոտվող համայնքներում պատրաստվող ազգային ավանդական ճաշատեսակներին, ինչը սակայն կարեւոր դերակատարություն կարող է ունենալ եթևիկ տուրիզմի զարգացման առումով: Այս ճաշատեսակների մատուցումը կարող է հանդիսանալ տուրիզմի բոլոր տեսակների ծառայությունների փայթեթերի կարեւոր բաղկացուցիչ մասը: Ավանդական այս ճաշատեսակներն աչքի են ընկնում ինչպես իրենց համեղությամբ այնպես ել պատրաստման գործընթացի յուրահատկությամբ: Յետազոտության ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել այս խնդրին եւ առանձնացվել են որոշ կերակուրներ, որոնք եթևիկ տուրիզմի զարգացման կարեւոր բաղադրիչ կարող են դառնալ: Նմանատիպ հիմնական ճաշատեսակներից են:

- Չիրաթթու: Պատրաստվում է արեւի տակ չորացված եւ այսուհետեւ աղացած վայրի տանձից եւ խնձորից, որը եփվում է բրնձով: Օգտագործվում է սառը վիճակում:
- Մասրաթթու: Նույնը պատրաստվում է վայրի մասուրից:

- Յոնաթթու: Խույսը պատրաստվում է հոնից:
- Խաշխաշ: Պատրաստվում է եգիպտացորենից եւ լոբուց, որը եփվում է ցորենի հետ եւ օգտագործվում սխեռութիւնում:
- Թռնաճաշ: Յարիսա, որը եփվում է թուրի մեջ արեւելյան լվիկով: Պատրաստվում է միայն ծիկահողում:
- Կորկոտ: Ծորեն, կարագ, միս (երբեմն խոզի գլուխ):
- Ծորվա: Լոբի, բրինձ, թթու, կանաչեղեն:
- Եթիմ կոնց տոլմա: Խաղողի տերեւևերի մեջ փաթաթված բրնձով տոլմա առանց մսի (որի պատճառով էլ կոչվում է եթիմի տոլմա), համեմված բազմաթիվ վայրի բույսերով
- Մասուրի գինի, ալոճի գինի, մոշի օղի:

3.6 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Յամայնքի դեկավարները բավականին լավատես են իրենց համայնքներում տուրիզմի զարգացման հնարավորությունների վերաբերյալ եւ պատրաստ են ներդրում կատարել իրենց ունեցած հնարավորություններով. տրամադրել աշխատողներ, տեղեկատվություն եւ գրասենյակային տարածքներ: Նրանք պատրաստ են աշխատակազմից մասնագետ(ներ) տրամադրել տուրիզմի զարգացման համար: Սակայն նրանք չունեն պլանավորման հմտություններ, պասիվ դիրքորոշում ունեն իրենց համայնքներում փոփոխությունների նկատմամբ, ակնկալում են կարճաժամկետ օգուտներ ստանալ եւ չունեն փորձ հարեւան համայնքների հետ շանթերն համատեղելու եւ ընդհանուր խնդիրներ լուծելու համար: Նրանք մեծամասամբ որդեգրել են բնական ռեսուրսները սպառողի դեր եւ վերաբերմունք՝ հիմնական ելնելով իրենց հանապազորյա կարիքներից:

3.7 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տուրիզմի զարգացումը գործող «Զանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուի» արգելավայրերին հարակից 6 համայնքներում պետք է դիտարկվի Սյունիքի մարզի տուրիզմի զարգացման ընդհանուր համատեքստում՝ հաշվի առնելով մարզի զարգացման հնարավորությունները եւ մարտահրավերները:

Թեեւ գործող «Զանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուի» արգելավայրերը տուրիզմի զարգացման եզակի հնարավորություններ ունեն, մեծ շանթեր պետք է ներդրվեն տուրիզմի ենթակառուցվածքների զարգացման եւ ծառայությունների որակը բարելավելու համար: Կարեւոր է, որ տուրիզմի կլաստերի բոլոր անդամներն աշխատեն արդյունավետ եւ բարձրակարգ ծառայություններ մատուցեն, որպեսզի կարողանան մրցունակ տուրիստական ծառայություններ ձեւավորել եւ վաճառել:

Անհրաժեշտ է մշակել թեմատիկ երթուղիներ, որոնք կարող են ընդգրկել օրինակ Դավիթ Բեկի եւ Միհիթար Սպարապետի կողմից կազմակերպված ազգային-ազատագրական շարժման վայրերը եւ հուշարձանները: Այս ուղղությունը պետք է ներգրավի նաեւ Սյունիքի այլ հատվածներում գտնվող տեսարժան վայրերը: Յետաքրքիր թեմատիկ երթուղի կարող են դառնալ այն տեսարժան վայրերը, որոնք ժամանակին այցելել է Մեսրոպ Մաշտոցը:

3.7.1 Խորհրդություննայ կառողությունների հզորագում եւ ռազմավարություն (օպջինայ)

ԲՀՊՏ-ների կառավարումը պետք է իրականացվի հատուկ «Կառավարման մարմին» եւ «Շահառուների խորհրդի» կողմից, որը պետք է հետեւի, որ եւ՝ բնապահպանական խնդիրները, եւ՝ համայնքի շահերը բավարար ուշադրության արժանանանան:

Խորհրդությունը պետք է օգնի Կառավարությանը մշակել տուրիզմի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն եւ գործողությունների տարեկան պլան: Այս պետք է նաեւ աջակցի իրագործելիության հետազոտությունների իրականացմանը, որոնք Կառավարությունը կարող է հաշվի առնել Ենթակառուցվածքային զարգացման ներդրումային ծրագրեր մշակելու ժամանակ: Խորհրդությունը պետք է նաեւ մասնակցի արգելավայրերի կառավարման կարգը մշակելու մեջ եւ հետեւի, որ Կառավարող մարմինն իրականացնի այն:

Խորհրդությունը պետք է կարողանա հանրային իրազեկման միջոցառումներ իրականացնել Եկամուտներ ստանալու այլընտրանքային հնարավորությունների մասին եւ հանրության մեջ նոր վերաբերմունք ձեւավորի բնական ռեսուրսների պահպանման եւ օգտագործման նկատմամբ: Այն կօգնի ազդել լեռնահանքային արդյունաբերության զարգացման վերաբերյալ որոշումների կայացման վրա եւ կօգնի ճնշում գործադրել գործարանների վրա՝ նրանց կողմից թափոնների ճիշտ կառավարումն ապահովելու համար: Այս գործառույթներն իրականացնելու համար Խորհրդությունների զարգացման օժանդակության կարիք կունենա, որը պետք է տրամադրվի դրույ կազմակերպությունների կողմից:

Յամայնքների դեկավարների մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին կարեւորվում է այն պատճառով, որ այս ապահովում է գյուղացիների ներկայացվածությունը եւ նրանց շահերի հաշվի առնելը: Եթե ԲՀՊՏ-ները ռեսուրսներ են տրամադրում, ապա ծառայությունները եւ Ենթակառուցվածքները տալիս են համայնքները: Առևվազն այս տեսանկյունից, ԲՀՊՏ-ների Կառավարման մարմին եւ համայնքների միջեւ արդյունավետ համագործակցությունը շատ է կարեւորվում: Իսկ պետական հատուկ մարմինների (օրինակ՝ ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, թանգարանների եւ այլն) եւ ՀԿ-ների ներգրավվածությունը պարզապես կարեւոր է, քանի որ այդ ներկայացվածությունը թույլ կտա ապահովել հուշարձանների պաշտպանության պատշաճ մակարդակը: Լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունները եւ պետք է ներգրավվեն Խորհրդում: Դա թույլ կտա նրանց անմիջականորեն տեղեկացնել բնապահպանական խնդիրների վերաբերյալ, տեղյակ լինել նրանց վերաբերմունքին եւ, ընդհանրապես, երկխոսության հնարավորություն ստանալ: Խորհրդի ստեղծմանը եւ գործարկմանը կարող են ներգրավվել համապատասխան փորձառություն ունեցող միջազգային մասնագետներ:

3.7.2 Ծառայությունների ձեւավորում

Տուրիստական ծառայությունների մշակման եւ առաջմիման գործողությունները պետք է իրականացվեն Կառավարող մարմին մասնակցությամբ եւ դեկավարությամբ: Ներկայիս ԲՀՊՏ-ների ուսակություններն այս առումով բավարար չեն: Ներկայիս կառույցները (Շիկահողի ՊԱ) փոխարենը կարող են արտակարգ ուղեւորություններ եւ քայլարշավներ կազմակերպել՝ չնայած անգլերեն եւ այլ օտար լեզուների խնդիրը դեռեւս լուծված չէ:

Ակնհայտ է, որ տուրիստական ծառայությունների փաթեթներ մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել իրանական շուկայի պահանջները՝ կացության համապատասխան վայրեր, սնունդ, ճանապարհային նշաններ եւ այլն: Իրանից եկող տուրիստների շրջանում Յայաստանի Վարկանիշները գնալով աճում

Են եւ Սյունիքի մարզը պետք է ի վերջո օգտվի այս հանգամանքից, քանի որ այս գբոսաշրջիկների գերակշիռ մեծամասնությունն անցնում է հետազոտված համայնքների միջով: 2010թ. ընթացքում հրանից Հայաստան եկած տուրիստների թիվը կազմել է 120,000, որից 20,000-ը Հայաստան են եկել Նովորիզի տունակատարության օրերին: Նովորիզի համեստ գնահատականներով այցելուների այս վերջին խումբը 2011թ. աճել է 30-40%-ով: Անհրաժեշտ է պարսկերեն լեզվով գովազդային եւ առաջմղման նյութեր պատրաստել եւ տարածել սահմանից այն կողմ: Միաժամանակ պետք է հիշել, որ առաջմղման գործողություններ կարող են իրականացվել միայն համապատասխան տուրիստական ծառայությունների մշակումից հետո:

3.7.3 Ենթակառուցվածքներ

Անհրաժեշտ է մշակել քայլարշավների երթուղիներ, պատրաստել քարտեզներ, տեղադրել նշաններ համապատասխան վայրերում: Որպես տուրիստական ծառայությունների զարգացման օրինակ կարելի է փորձնական ծրագրով վերանորոգել Ծավ, Շիշկերտ կամ Գեղանուշ համայնքների տներից որեւէ մեկը եւ փորձել շահագործել այն որպես հյուրատուն կամ ռեստորան: Այս ծրագիրը ցուցադրական օրինակ կծառայի տեղական բնակչության եւ Ներդրողների համար: Խորհրդային ժամանակահատվածում Շիշկերտում կառուցված քոթեջները եւս կարող են ծառայել որպես հյուրատներ՝ արդեն առավել ժամանակակից հարմարություններով եւ հարդարմաբ: Այս տևատերերը, որոնք պատրաստ կլինեն իրենց տները վերափոխել հյուրատների պետք է ստանան խորհրդատվական ծառայություններ եւ նաեւ սահմանափակ ֆինանսական աջակցություն, որը կարող են ուղղել տների հետագա բարեկարգմանը:

Յիս տները, որոնք կարող են օգտագործվել որպես Ենթակառուցվածքներ (հյուրանոցներ, ռեստորաններ, թանգարաններ, տեսարժան վայրեր) ենթակա են անհապաղ վերանորոգման եւ բարեկարգման: Անհրաժեշտ է կառուցել տեսարաններ, որտեղ ինարավոր կինսի ներկայացնել ԲՀՊՏ-ների բնական եւ պատմամշակութային արժեքները: Ցանկալի է կառուցել նաեւ հատուկ ենթակառուցվածքներ, որտեղից այցելուները կկարողանան հետեւել կենդանիներին եւ թռչուններին:

3.7.4 Ծառայությունների ձեւավորում

2005թ. գարնանը Փոխըմբռնման եւ Համագործակցության Յուշագիր է ստորագրվել Սյունիքի Մարզպետարանի եւ Իրանի հսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատականի իշխանությունների միջեւ: Փաստաթուղթը նպատակ ունի խթանել տարրեր սոցիալ-տնտեսական ոլորտներում երկու տարածաշրջանների համագործակցությունը՝ ներառյալ մշակութային եւ տուրիստական գործողությունները: Սա լավ նախադրյալ է հանդիսանում Սյունիքի մարզում տուրիզմի զարգացման համար: Այս ամենի ներքո կարելի է ներկայացնել կազմակերպել իրանական տուրիստական գործակալությունների համար, նկարահանել համապատասխան տեսանյութեր, պատրաստել առաջմղման հեռուստատեսային եւ էլեկտրոնային (համացանցային) նյութեր: Մասնակցությունը իրանական ցուցահանդեսների եւ նմանատիպ միջոցառումների կազմակերպումը Կապանում եւս շատ օգտակար կարող է լինել: Այսուամենայնիվ՝ խթանման եւ առաջմղման գործողությունները պետք է սկսվեն միայն Ենթակառուցվածքների եւ հասարակական ծառայությունների բարելավումից հետո:

Անհրաժեշտ է պատրաստել տպագիր նյութեր, որոնք տվյալներ կպարունակեն ԲՀՊՏ-ներում առկա պատմամշակութային եւ բնական հուշարձանների՝ դրանց նկարագրության եւ պատմության, քարտեզի վրա դրանց տեղակայվածության վայրերի եւ մյուս տեսարժան տեղերից հեռավորության, վրանատեղերի եւ խմելու ջրի բնական աղբյուրների եւ այլ մանրամասների վերաբերյալ: Այս

Նյութերը կարող են օգտագործվել տուրիստական գործակալությունների կողմից՝ պոտենցիալ հաճախորդներ ներգրավելու ժամանակ:

Ուստորաններին պետք է խրախուսել, որպեսզի նրանք ազգային ուտեստներ պատրաստեն եւ մատուցեն: Անհրաժեշտ է նաեւ հետազոտել իրանական հնարավոր հաճախորդների նախասիրությունները: Ուստորանների արտաքիններքին հարդարանքը եւ մատուցվող ծառայությունների որակը պետք է բարելավել այսպես, որ դրանք համապատասխանեն ոչ միայն տեղական, այլ նաեւ արտասահմանյան հյուրերի պահանջներին: Անձնակազմը պետք է անհրաժեշտ վերապատրաստում ստանա սննդի անվտանգության ստանդարտներին ծանոթանալու, հյուրընկալության միջազգային կանոնները սովորելու համար:

Անհրաժեշտ է պատրաստել եւ տպագրել սննդի մեջ օգտագործվող, տեղում աճող բուսատեսակների կատալոգներ: Յնարավորինս պետք է խթանվեն տարբեր բուժական կիրառություն ունեցող դեղաբույսերի սպառումը ռեստորաններում, հյուրատներում եւ մանրածախ առեւտրային ցանցում:

Հաջորդ հնարավոր ծառայությունը գիտական տուրիզմն է, որը կարող է հատուկ ծառայություններ առաջարկել կենսաբաններին, բուսաբաններին, եւ այլոց, որոնք ուսումնասիրում են Ենդեմիկ եւ ընական բուսատեսակներ եւ այլն:

4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հետազոտված շահառուների ցանկը

Անուն	Կազմակերպություն	Կոնտակտ
Արարատ Մարտիրոսյան	Ծավի համայնքապետ	077040470
Ալբերտ Հարությունյան	Ճակատենի համայնքապետ	094300310
Գեղամ Ղազարյան	Շիկահողի համայնքապետ	093011509
Կամո Ավանեսյան	Գեղանուշի համայնքապետ	028520029
Ստեփան Պետրոսյան	Լեռնաձորի համայնքապետ	094820923
Ալբերտ Բեգլարյան	Վարդանիծորի համայնքապետ	094062006
Թադեևս Ղազարյան	Սոցիալ-տնտեսական ծրագրերի վարչության պետ	093011509
Արթուր Ղազարյան	«Էկոլոգիական անվտանգության ապահովման Եւ ժողովրդավարության զարգացման» ՀԿ	093887171
Աշոտ Ավագյան	Կապանի Օրիուս կենտրոնի համակարգող	093795921
Վլադիկ Մարտիրոսյան	«Խուստուի» ՀԿ Նախագահ	077131801
Շահեն Բաբայանց	«Ապավեն» ՀԿ Եւ Սյունիքի մարզի տուրիզմի տեղեկատվական Եւ մարզետինգի կենտրոնի ղեկավար	094224178
Ռոբերտ Գրիգորյան	Լեռնաձոր համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն	094820923
Գրիշա Սմբատյան	Կապան քաղաքի թանգարանի տնօրեն	098258018
Վատիկ Յակոբյան	Յուշարձանների պահպանության պետական գործակալության Սյունիքի մասնաճյուղ	093049808
Ռոբերտ Մինասյան	Ներգևա տուրիստական գործակալությունների միության նախագահ	091226626
Ռուբեն Սկրտյան	Շիկահողի ՊԱ ՊՈԱԿ տնօրեն	093222051
Կարեն Խաչատրյան	«Արքենտուր» Յայաստան ճամփորդական ընկերություն	091426745
Արկադի Սահակյան	«Ավարայր» արկածային տուրիստական ընկերություն	010563681
Ռիտա Նավոյան	Յայաստանի ուղեկցորդների գիլդայի խորհրդի անդամ	093565352
Սյուզի Ազոյան	ՀՄՎՀ տուրիզմի համակարգող	093408497
Վանո Ղարոյան	«Կենաց Տուն» ՀԿ Նախագահ	094757302

4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հետազոտության գործիքը

	<p>WWF Armenia 96 Sarmen Str. Yerevan 0019 Armenia</p>	<p>AM Partners Consulting Company ap.1, 62/1 K.Ulnetsi Str. Yerevan, Armenia</p>	
-----------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------

Տուրիզմի պոտենցիալի գնահատման ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի հարցվող,

Ձեզ ներկայացված հարցաթերթի լրացմամբ Դուք կօժանդակեք Բնության Համաշխարհային Հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի իրականացմանը։ Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կենսաբազմազանության պահպանությանը եւ նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելով էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածություն։

Հարցաթերթիկը կազմվել է նախատեսվող «Գնիշիկ», «Խուստուի» Եւ գործող «Զանգեզուր» արգելավայրերի վերաբերյալ Զեր մոտեցումները պարզաբանելու նպատակով։ Ծրագրի իրականացման թիմը կարեւորում է Զեր կարծիքը՝ ակնկալելով հստակ պատասխաններ։

Ակնկալում ենք Զեր աջակցությունը, կանխավ շնորհակալություն։

5 Ի. Անձնական տվյալներ

Անուն-ազգանուն	
Կազմակերպություն	
Պաշտոն	
Կրթություն	
Տարիքը	
Հասցեն	

1. Տեղյակ եք, արդյո՞ք «Գնիշիկ», «Խուստուի» արգելավայրերի ստեղծման եւ «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնման ծրագրերի մասին։ Եթե այո, ապա նշեք՝ ինչ գիտեք (ո՞վ է հիմնում, ո՞ր ծրագրով, ինչ նպատակով եւ այլն):

այո	ոչ

2. Տեղյակ եք, արդյո՞ք «ԳԱՀՀիկ», «Խուստուի» արգելավայրերի նախատեսվող ինչպես նաև գործող «Զանգեզուր» արգելավայրի առկա տարածքների մասին: Եթե այո, ապա նշեք մոտավոր սահմանները:

այո	ոչ

ՄԱՍ I. Ենթակառուցվածքներ Եւ ծառայություններ

3. Առկա՝ են տարածքում հետեւյալ տուրիստական ենթակառուցվածքները Եւ ծառայությունները:

Ենթակառուցվածք կամ ծառայություն	Առկայություն	Նկարագիր
Հյուրանոցներ	<input type="checkbox"/>	
Հյուրատուն	<input type="checkbox"/>	
Նախաճաշ	<input type="checkbox"/>	
ճաշ	<input type="checkbox"/>	
Ընթրիք	<input type="checkbox"/>	
Մշտական սառը ջուր	<input type="checkbox"/>	
Մշտական տաք ջուր	<input type="checkbox"/>	
Սանիամգույց	<input type="checkbox"/>	
Ձեռուցում	<input type="checkbox"/>	
Հեռախոսակապ	<input type="checkbox"/>	
Համացանց	<input type="checkbox"/>	
Տրանսպորտի տրամադրում	<input type="checkbox"/>	
Մեքենաների վարձույթ	<input type="checkbox"/>	
Հեծանիվների վարձույթ	<input type="checkbox"/>	
Վրանների վարձույթ	<input type="checkbox"/>	
Ուղեկցորդներ	<input type="checkbox"/>	
Թարգմանություն	<input type="checkbox"/>	
Տեղեկություններ տվողներ	<input type="checkbox"/>	
Այլ		

4. Կան, արդյո՞ք, սննդի կետեր: Եթե այո, ապա ինչպիսի՝ սնունդ է մատուցվում:
ա. Տեղական ավանդական _____

այո	ոչ

թ. Եվրոպական _____
գ. Տնական _____
դ. Այլ _____

5. Որքանո՞վ են հասանելի հեռահաղորդակցության ծառայությունները հյուրանոցային
տարածքներից դուրս հատվածներում:

6. Որքանո՞վ են հասանելի ֆինանսական եւ բանկային ծառայությունները համայնքներում: Որտե՞ղ
է (ինչքա՞ն հեռու է) մոտակա բանկային բաժանմունքը:

7. Ինչպիսի՞ կանոնավոր միջոցառումներ են անցկացվում համայնքում կամ այցելության կոնկրետ
վայրերում:

Մշակութային

Ավանդական

Տնտեսական

Այլ

8. Թվարկեք նշված տարածքների հետ եւ դրանց համար աշխատող տուրիստական կառույցների եւ
կազմակերպությունների անուններ:

9. Արդյո՞ք համայնքը կամ այցելության վայրերը ներգրավված են տուրիստական
երթուղիներում: Եթե այո, ապա ինչպիսի՞:

այո	ոչ

10. Ինչպիսի՞ վիճակում են գտնվում ճանապարհները:

Միջհամայնքային

Ներհամայնքային

Տուրիստական երթուղիները

11. Ինչպե՞ս է աշխատում հասարակական տրանսպորտը:
Երթուղային տրանսպորտ

Տաքսի ծառայություններ

12. Կա՞ն արդյոք ճանապարհային նշաններ եւ տեղեկատվական ցուցավահանակներ:

Հիմնական մայրուղիների վրա:

այո	ոչ

Միջհամայնքային ճանապարհների վրա:

այո	ոչ

Այցելության վայրերի ճանապարհին:

այո	ոչ

13. Կա՞ն արդյոք տպագիր նյութեր այցելության վայրերի մասին: Եթե այո, խնդրում ենք
տրամադրել:

14. Դիտարկվող տարածքում կա՞ արդյոք առողջապահական հաստատություն:
Ինչպիսի? _____, որտեղ _____

այո	ոչ

15. Որքա՞ն է հեռավորությունը մինչեւ մոտակա առողջապահական հաստատությունը:

ՄԱՍ II. Տուրիստական ռեսուրսներ

16. Ինչպիսի այցելության վայրեր կան համայնքի եւ հարակից տարածներում:
ա.Բնական հուշարձաններ (անտառներ, լեռներ, քարանձավներ, գետեր, լճեր,)

բ.Եկեղեցիներ _____

գ. Մշակութային հուշարձաններ _____

դ.Այլ

ՄԱՍ VI. Փոխկապվածություն

17. Ինչպե՞ս կարող է արգելավայրերի տուրիստական պոտենցիալը նպաստել Զեր զարգացմանը:

18. Ինչպե՞ս կարող է տուրիզմի զարգացումը նպաստել արգելավայրերի զարգացմանը:

18. Ինչ մասնակցություն կարող եք Դուք ունենալ արգելավայրերում տուրիզմի կազմակերպման և զարգացման գործընթացում:
